

2035

Բ. ԳՈՐԵԿ

# ԵԱՐԻՋԻ ԿՈՄՈՒՆԱՅԻ ՈՐԸ ՄՈԴՐ-Ի ՈՐՆ Ե



9(44)

9-81

ՍՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄՈԴՐ-Ի ԿԵՆՏՐՈՆԻ  
ԲԵՂԱՆ

1986



3 98

9(44)  
7-81

Բ. Գ Ո Ր Ե Վ

21 JAN 2008  
30 MAY 2011

# ՓԱՐԻԶԻ ԿՈՄՈՒՆԱՅԻ ՈՐԸ Մ Ո Պ Ր - Ի Ո Ր Ն Ե

ԹԱՐԳՍԱՆ. ԳԱՐ ՀԱԿՈՐՅԱՆ

70246

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄՈՊՐ-Ի ԿԵՆՏԿՈՄԻ  
ԹԵՐԵՎԱՆ 1936



1128  
37

## ՓԱՐԻԶԻ ԿՈՄՍՈՒՆԱՅԻ ՈՐԸ՝ ՄՈՊՐԻ ՈՐՆ Ե

Վաթառնչորս տարի յե անցել այն օրից, ինչ մարդկության պատմության մեջ առաջին անգամ ապստամբ բանվորներն իշխանությունն իրենց ձեռքն առան։ Այս բանը տեղի ունեցավ Փարիզում՝ Փրանսիական պետության մայրաքաղաքում։ Ամեն տարի մարտի 18-ին—Փարիզի կոմունայի հռչակման օրը— ամբողջ աշխարհի հեղափոխական բանվորները տոնում են կոմունայի հերոսների հիշատակը։

Հեղափոխական մարտիկներին ոգնող միջազգային կազմակերպությունը Փարիզի կոմունայի օրն իր օրն է համարում։

Ամբողջ աշխարհի աշխատավորությանը ՄՈՊՐ-ն այդ օրը հիշեցնում է այն զոհերի մասին, վոր Փարիզի պրոլետարիատը տվեց կոմունայի ջախջախման ժամանակ, ինչպես և այն անթիվ սպանությունների և անվերջ խոշտանգումների մասին, վորոնց յենթարկում է ամբողջ աշխարհի իմպերիալիստական բուրժուազիան հեղափոխական բանվորներին ու գյուղացիներին։

Փարիզի կոմունան մեծ դատ յեղավ բոլոր շահագործվողների համար։ Պրոլետարիատի մեծ առաջնորդները—Մարքսը, Էնգելսը, Լենինը, Ստալինը— ուշիուշով ուսումնասիրեցին կոմունայի նվաճումներն ու սխալները։ Յեվ մեր յերկրի պրոլետարիատը, ընթանալով նրանց գծած ճանապարհով՝ հաղթական կերպով ամարտեց այն, ինչ 1871 թ. Փարիզի բանվորներն եյին անել։

Իսկ ի՞նչ բան էր Փարիզի կոմունան, ինչպե՞ս էր առաջ յեկել, ինչ էր անում, ինչո՞ւ և ինչպե՞ս խորտակվեց հերոսական պայքարում։ Այս բանը պետք է գիտենա ամեն մի աշխատավոր,



ամեն մի դպրոցական, քանի վոր Փարիզի կոմունայի պատմական նշանակութիւնը մեծ է հետագա վողջ հեղափոխական բանվորական շարժման համար, մեր յերկրի Հոկտեմբերյան հաղթական հեղափոխութեան համար, մեծ է Կոմունայի պատմական դերն այժմ տեղի ունեցող բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի համար՝ ամբողջ աշխարհում:

#### ԻՆՉՊԵՍ ԱՌԱՋ ՅԵԿԱԼ ՓԱՐԻՋԻ ԿՈՄՈՒՆԱՆ

Սկսած Ֆրանսիական Մեծ Հեղափոխութիւնից, այսինքն՝ 18-րդ դարի վերջից մինչև Փարիզի կոմունան, Ֆրանսիայում չատ անգամ է ապստամբութիւն յեղել:

Փարիզի բանվորների վերջին, հսկող ապստամբութիւնը 1848 թվին, բուրժուական հանրապետութեան որով անխնա ճնշվեց: Այս բանը լպիրշ ավանտյուրիստ Լուի Բոնապարտի (Նապոլեոն III)՝ հռչակավոր կայսր Նապոլեոն I-ի ազգականի համար, ճանապարհ հարթեց դեպի իշխանութիւնը: Հենարան ունենալով բանկիրներին, ֆաբրիկատերերին, ամեն տեսակ չարաշահներին, ինչպես և կալվածատերերին ու հարուստ գյուղացիութեանը՝ նա իշխանութեան գլուխ անցավ: Նրա թագավորութեան առաջին տաս տարին Ֆրանսիական պրոլետարիատն ուժ էր հավաքում նոր պայքարի համար: Այդ պայքարն սկսվեց 60-ական թվականներին, առանձնապես այդ թվականների յերկրորդ կեսին, յերբ Ֆրանսիայում հրապարակ յեկավ բանվորների միջազգային ընկերութեան սեկցիան, այսինքն՝ I Ինտերնացիոնալի սեկցիան:

Կառավարութեան ու խոշոր բուրժուազիայի զիջատիչ չահագործողական քաղաքականութեան հանդեպ աճող դժգոհութիւնը, գործադուլային շարժումը, կառավարութեան դեմ արվող ցույցերը, կառավարութեան խիստ քննադատող թերթերի լայն տարածումը—այս բոլորն սկսում են Նապոլեոն III-ը դին լուրջ կերպով անհանգստացնել: Նրան արդեն հաջողվում էր դժգոհ բուրժուազիային իր հետ հաշտեցնել հաղթական պատերազմներով— Ռուսաստանի դեմ՝ 1853—1855 թ.թ. և Ալստրիայի դեմ 1859 թ.— ուստի և հույս ունենալով նոր ու հաջող պատերազ-

մի ողնութեամբ ճնշել հեղափոխական շարժումը՝ նա յենթարկվեց պրուսական միլիտար Բիսմարկի պրոպագանդային ու պատերազմ սկսեց Պրուսիայի դեմ: Այս պատերազմի կարիքն էր դրում նաև Ֆրանսիական բուրժուազիան, վոր հույս ուներ, թէ պատերազմն իրեն հնարավորութիւն կտա հարստանալ:

Բիսմարկն աշխատում էր բաժան-բաժան յեղած գերմանական պետութիւնները միացնել—մի կայսրութիւն դարձնել՝ Պրուսիայի գլխավորութեամբ: Պրուսիայի լիբերալ կուսակցութիւնները, ինչպես և գերմանական մյուս պետութիւնները դիմադրում էին Գերմանիան բունի կերպով միացնելու այս քաղաքականութեանը: Ֆրանսիայի դեմ հաջող պայքարում ունենալով միջոցով Բիսմարկը հույս ուներ ճնշել այդ դիմադրութիւնը և իրականացնել իր ծրագիրը: Մի շարք տարիների ընթացքում պրուսական բանակը վարժվում ու կատարելագործվում էր: Այդ բանակն իր հզորութիւնն արդեն ցույց էր տոկ Ալստրիայի դեմ ունեցած պատերազմում:

Իսկ Ֆրանսիան պատերազմի համար անպատրաստ դարձվեց: Նապոլեոն III-ը ի կայսրութիւնը բացարձակապես սկսեց քայքայել: Նախապէս ու անբարոյականութիւնը, լպիրշ ու անամոթ սպեկուլացիան, գիշատչութիւնն ու դանձադողութիւնը, վոր ծաղկում էին այն ժամանակվա Ֆրանսիայի գալառներում ու բուրժուական շրջապատում, մուտք գործեցին նաև բանակը: Ֆրանսիական բանակի գեներալներն՝ ապաշնորհ կարյերիստներ էին, բանակի մատակարարման դործը խաբեբաների ձեռքումն էր:

Գերմանական զորքերը կայմակի արագութեամբ մի շարք ծանր հարվածներ հասցրին Ֆրանսիային: Առաջին պատերազմական գործողութիւններն սկսվեցին 1870 թ. ոգոստոսի 2-ին, իսկ սեպտեմբերի 2-ին Սեդանի մոտ Ֆրանսիական բանակն արդեն ջախջախվեց և 200-հազարանոց բանակը Նապոլեոն III հետ միասին գերի ընկավ:

Ֆրանսիական բանակի մյուս մասը, վոր գեներալ Բադենն էր ղեկավարում, փախված էր Մեց բերդում և, վերջիվերջո կայսրութեան կործանումից հետո թվով 100-հազար հոգի, ըստ իսպառն յեղադ անձնատուր լինել: Գերի վերցրած գեներալ



Բաղենը հարձակվող պրոլետարիատի առաջ մոռացութեան տալով ամեն տեսակի «հայրենասիրութիւն»՝ իր բանակը Պրուսական թագավորի տրամադրութեանն առաջարկեց՝ Յրանսիայի հեղափոխական շարժումը ճնշելու համար։ Նա իր բանակը մասնացույց եր անում իրրեւայն միակ ուժը, վոր հիմա ընդունակ է հաղթահարել «անարխիան» և վերականգնել Յրանսիայի կարգը։

Պրուսական բանակը պաշարեց Փարիզը։ Սեպտեմբերի 4-ին ժողովրդական վիթխարի ցույցերի ճնշմամբ Փարիզում հանրապետութիւն հռչակվեց։ Բայց իշխանութեան գլուխն անցան «Լիբերալ սպիդիցիայի» ներկայացուցիչները՝ բուրժուական խանձրահամած գործարարներն ու անպիտանները, վոր խոստացել էին յերկիրը պաշտպանել ու միաժամանակ դադարեցնել համաձայնութեան էյին դալիս թշնամու հետ, կամ պարզապես սարսուռածի էյին յենթարկում Փարիզի պաշտպանութիւնը։

Մինչդեռ Փարիզի բանվորները զինվում էին հաստատու վորոշելով Փարիզը չհանձնել, Փրանսիական բուրժուազիան ու վողջ հետադիմական դատակարգերը պատրաստ էին ամենախայտառակ հաշտութիւն կնքել Պրուսիայի հետ։ Պրոլետարիատի նկատմամբ բուրժուազիայի ունեցած դատակարգային առելութիւնն ավելի ուժեղ դտնվեց, քան պաշտոնապես քարոզվող «հայրենասիրութիւնը»։

Իրեն «ազգային պաշտպանութեան կառավարութիւն» անվանող (իսկ բանվորներն անվանում էին «ազգային դավաճանութեան կառավարութիւն») ժամանակնվոր կառավարութեան անդրկուլիսյան բանակցութիւնները հասցրին Պրուսիայի հետ զինադադար կնքելուն, իսկ այնուհետև՝ նաև հաշտութիւն։ Ըստ այդ հաշտութեան պայմանների, Յրանսիան Գերմանիային պետք է զիջեր յերկաթից հարուստ Ելզասի ու Լոթարինգիայի նահանգները և 5 միլիարդ Փրանզ պատերազմական տուգանք վճարեր։ Պաշարումը մեծ փլուզումների հասցրեց։ Արդյունաբերական ձեռնարկութիւնների մեծ մասը չէր բանում, վորի արդյունքը յեղավ մատախական դործադրկութիւնը։ Պարեն հասցնելու դործը չափադանց դժվարացել էր։ Բանվոր ընակ-

չութիւնը սարսափելի քաղցած էր։ Բանվորների կանայք զիջերներն անընդհատ հերթի էյին կանգնում խանութների առաջ և սիւպիւած էյին ամեն տեղից հեռանալ առանց վորեւէ բան ստանալու։ Իսկ հարուստ բուրժուազիան շահում ու փարթամ կյանք էր վարում։ Առաջնակարգ անհրաժեշտ մթերքների ճիշտ հաշվառում չկար, և այս բանը չարաշահութեան լայն հնարավորութիւններ էր տալիս։

Միաժամանակ Փարիզում կաղմակերպվել էր ազգային գլխարդիւ, վորի մեջ մեծամասնութիւն կաղմողը պրոլետարիատն էր ու մանր բուրժուազիան։ Այս ազգային գլխարդիւն Փարիզի շրջակայքում պահակութիւն էր անում և յերբեմն էլ նույնիսկ կովի յեր բռնվում Փարիզը պաշարող թշնամու հետ։ Տեսնելով, վոր պարտութիւն-պարտութեան հետեից է դալիս, կառավարութիւնը վոչ մի միջոց ձեռք չի առնում պաշտպանութեան դործը կաղմակերպելու համար, վոր կառավարութիւնն անուր լիփիւթյամբ մերժում է բանվորների բոլոր որինական պահանջները՝ Փարիզի մասսաներն սկսեցին խուլ կերպով հուզվել։

Յերեք ամսվա մեջ զինված ապստամբութեան յերկու վործ յեղավ, բայց այդ վործերն անհաջող էյին։

Բանվորների ու քաղաքի չքավորութեան դրութիւնը գնալով վատանում էր։ Հաց համարյա թե բոլորովին չկար։ Զիւռ միսը միմիայն հարդատներին մատչելի կերակուր դարձավ։ Բանվորների ընտանիքների մեծ մասն իրրեւ կերակուր գործ էր ածում չան, կտովի և նույնիսկ առնետի միս։ Հացի սակագինն այնքան բարձր էր, վոր դործադուրկ բանվորները հնարավորութիւն չունէին հաց գնել։

1871 թ. հունվարի 28-ին իշխանութիւնները հայտարարեցին, թե Փարիզը հանձնվում է։ Բայց գերմանական զորքերը, զխտնալով բանվորների մարտական տրամադրութիւնը՝ չէին վստահանում քաղաք մտնել, մանավանդ բանվորական թաղերը, և արիստոկրատական թաղից՝ Յելիսեյան զաշտերից գէներ չանցան։ Փետրվարին տեղի ունեցան ազգային ժողովի ընտրութիւններ։ Այդ ժողովը Գերմանիայի հետ հաշտութիւն պետք է կնքեր ու լուծեր Յրանսիան կառավարելու ձեին վերաբերող



հարցը: Ընտրութիւններին ձայները մեծ մասը կալածատերերին, կուլակներին ու տերտերներին տրվեց, վորոնք գլուղացիական մասսայի վրա ազդում էին՝ շուտափույթ հաշտութեան և ներքին «խռովութիւններին» վերջ տալու խոստումով:

Այս հետադիմական ժողովը կառավարութեան գլուխ նշանակեց քալիթաու և բուրժուական վոյսկալ—հետադիմ Տյերին՝ միապետականին ու բանվորներին թշնամուն: Դեռ 1834 թ. առաջին անգամ մինիստր դպոնալով՝ նա հռչակ ձեռք բերեց այն բանով, վոր Փարիզի բանվորների ապստամբութեան ժամանակ հրամայեց անխնա սպանել ապստամբներին, ամենից առաջ յերիտասարդութեանը:

Աղգային ժողովի առաջին քայլերից մեկը յեղավ աղգային զվարդիակահանների ոռճիկ վերացումը: Փարիզի գործադուրկների համար այդ չնչին ոռճիկն ապրուստի միակ աղբյուրն էր: Այս վորոշումը տառնյակ հազար զվարդիակահանների քաղցի մատնեց և, բնականաբար, բանիւր մասսաների ու աղգային զվարդիայի պրոլետարական մասի մեջ հուզմունքի նոր ալիք առաջ բերեց:

Պրոլետարիատը մանր բուրժուակայի շրջանում մեծ աջակցութիւն գտավ: Աղգային ժողովի միջոցառումները մանր բուրժուակայի գրութիւնն էլ խիստ վատացնում էին: Աղգային ժողովը մուրհակների վճարումներն ու բնակարանային վարձի ապառիկները հետաձգելու որոնք հրապարակեց:

Մանր բուրժուական ինտիլիգենցիան, վոր քաղցից ու գործազրկութեանից աստիկ տուժել էր, նույնպէս չափազանց դժգոհ էր սահմանադիր ժողովի հետադիմական կազմից ու միապետութիւնը վերականգնելու սպառնալիքից:

Համայն հուզմունքի ու դժգոհութեան արդյունքը յեղավ աղգային զվարդիայի կենտրոնական կոմիտե կազմելը: Այս կոմիտեն բաղկացած էր աղգային զվարդիայի բատալիոնների ընտրած պատգամավորներից և փաստորեն միացնում էր զինված բանվորներին ու սրանց հարող հեղափոխականորեն տրամադրված մանր բուրժուակային: Հենց այս կենտրոնական կոմիտեն էլ վճռական դեր խաղաց մարտի 18-ին Փարիզի պրոլե-

տարիատի կատարած ապստամբութեան մեջ, մի ապստամբութիւն, վոր սկիզբը դրեց Փարիզի կոմունային:

Կառավարութիւնը հասկացավ իրեն սպառնացող այն վտանգը, վոր կապ ուներ աղգային զվարդիայի կենտրոնական կոմիտե ստեղծելու հետ: Նա գիտեր, վոր Փարիզի պրոլետարիատի մինչև որս կատարած ապստամբութեան բոլոր փորձերը ջախջախված են յեղել միայն նրա անկազմակերպ լինելու պատճառով: Այժմ պրոլետարիատը վոչ միայն զինված էր, այլև, հանձին այդ կենտրոնական կոմիտեյի, այնպիսի մի որդան հիմնեց, վոր հասունացած ապստամբութեան առաջնորդի ու զեկավարի դեր պետք է խաղար:

Կառավարութիւնը Տյերի գլխավորութեամբ իր անելիքն էր համարում՝ ինչ զնով էլ լինի՝ բանվորներին զինաթափ անել: Աղգային ժողովը փոխադրվեց Վերսալ՝ Փարիզից քան կիլոմետրի վրա դոնվող մի փոքրիկ քաղաք: Փետրվարին արդեն ձայների հսկայական մեծամասնութեամբ աղգային ժողովը ճանաչեց հաշտութիւնը:

Բանվորները գիտէին, վոր աղգային զվարդիայի դտում է պատրաստվում, այսինքն՝ հեղափոխական տարրերի զինաթափութիւն, և պատրաստ սպասում էին: Այսպիսով՝ յերկու կողմն էլ՝ աղգային ժողովի կառավարութիւնն ու հեղափոխական Փարիզն անխուսափելի ընդհարման էին պատրաստվում:

Մարտի 17-ին մինիստրների խորհուրդը Տիերի առաջարկութեամբ վորոշեց աղգային զվարդիան զինաթափ անել և սկսել այն նրա հրետազորից: Կառավարութիւնը մի կոչով դիմեց Փարիզի բնակչութեանը. այդ կոչը հող պետք է պատրաստեր սկսվող պրոլետարիայի համար: Այդ կոչով կառավարութիւնը զիմում էր բնակչութեանը, վոր չենթարկվի «խորհրդավոր կոմիտեյի հրամաններին, վոր ուղում է ինքնուրույն հրամանատարութիւն անել աղգային զվարդիայի մի մասին, չի ճանաչում գլխավոր հրամանատարին և ուղում է իր իշխանութիւնը հիմնել»:

Մարտի 18-ի լուսաբացին, յերբ այդ կոչը փակցվում էր Փարիզի փողոցներում, կառավարական զինվորները գողիգող քարձրացան Մոնմարտրի բլուրը, վորտեղ աղգային զվարդիա-



յի թնդանութիւնն եյին, վոր այլ թնդանութիւնը զաղտաղողի տանէն: Այս մանյովը նկատվեց: Տաղնապն ակովեց, ժողովուրդը հավաքվեց: Զինվորներն ակեցին լանդորներէ հետ յեղբայրանալ, իսկ ժողովրդի ատած յերկու գեներալ գերի վերցվեցին ու հետո սեփական զինվորներէ ձեռքով զնդակահարվեցին:

Ահա թե այս տեսարանն ինչպե՞ս և նկարագրուե՞լ Ֆրանսիացի հեղափոխականուհի Լուիզա Միշելը՝ ապստամբութեան մտանակիցը:

«Մոնմարտը արթնացել էր... Արշալուսը բացվում էր, ահագնազի հնչյուններն ողը ճեղքում էին, մենք գնում էինք, զիտնալով, վոր վերելը կշտնենք մարտի պատրաստ բանակը: Մենք յերազում էինք մեռնել հանուն ազատութեան: Կարծես յերկրիս յերեսին մի բան մեզ բարձրացնում էր: Թող մենք մեռնենք, բայց չե՞ վոր վողջ Փարիզը կապտամբի: Այնպիսի մոմենտներ են լինում, յերբ ամբողջ մարդկութեան անվանգարդն և դառնում...»

Բայց ըլուրների վրա, վորտեղ բանակը թնդանութիւնն արդեն լծել էր, վոր միացնի այլ գիշեր Բատինոյից զողացած թնդանութիւնը<sup>1)</sup> հետ, մահը չեր մեղ սպասողը: Մեղ սպասում էր ժողովրդի անակնկալ հաղթանակը:

Մեր ու բանակի արանքում կանայք հարձակվում են թնդանութիւնի ու մետրալյոններին<sup>2)</sup> վրա, իսկ զինվորները մնում են անշարժ:

Հենց վոր գեներալ Լեկոնդըն ամբոխի վրա կրակ բանալու հրաման տվեց, չարքերից մի յենթասպա դուրս յեկավ, կանգնեց իր վաշտի առաջ ու Լեկոնդից բարձր դուռաց:

— Կոթունները դեպի վե՛ր:

Զինվորները հնազանդվեցին: Այս բանն անողը Վելդագերն էր, վորին վերսպրիներն այս պատճառով մի քանի ամսից հետո գնդակահարեցին:

Հեղափոխութեանը կատարվեց: Լեկոնդը, վոր ձերբակալ-

1) Բատինո—Փարիզի բանվորական թաղերից մէկը, վորտեղից Տյերի զինվորներին արդեն հաջողվել էր մի քանի թնդանութիւն զողանալ:

2) Մետրալյոն—հին ժամանակի զենք՝ զնդացրի նման:

վել էր այն ըուպեյին, յերբ յերրորդ անգամն էր հրամայել կրակ բանալ, տարվել էր Ռոզյե փողոցը, վորտեղ արդեն Կլեման Թոման<sup>1)</sup> էր դառնում, վորին, չնայած քաղաքացիական հազուադէպ, վորի մեջ նա զբաղվում էր Մոնմարտի բարիկադըն ուսումնասիրելով, ճանաչել էին: Համաձայն պատերազմի որենքների, նրանք պետք և գնդակահարվեցին»:

Մոնմարտը դեպքն սկիզբ հանդիսացավ հեղափոխական Փարիզի ապստամբութեան՝ ընդգեթ հետադիմական կառավարութեան և Աղդալին ժողովի: Տյերի կոչին մի քանի հարյուր հոգի միայն արձագանքեցին: Յերեք հարյուր հազար զինված բանվորներ ու մանր բուրժուազիայից յեկած՝ նրանց դաշնակիցները մնացին աղդալին գլխաւորապէս կենտրոնական կոմիտէի կողմը:

Ուշոր բուրժուազիան իր արբանյակների հետ փախավ Վերսալ՝ Տյերի ու Բիսմարկի հովանաւորութեան տակ: Պրուսական զորքերն առաջիկա պես պաշարում էին Փարիզը: Ամբողջ աշխարհից կտրված քաղաքն ակեց սպրել առանց իր դաւամոր շահագործողների:

«Յերկրորդ կայսրութեան շվայա Փարիզը, — գրում էր այնուհետեւ Մարքսն Ինտերնացիոնալի «Մանիֆեստում», — անհետ կորել էր... 48 թվի փետրվարից Փարիզի փողոցներն առաջին անգամն էին անվտանգ դարձել, թեև այնտեղ վոչ մի վոստիկան չկար... Կոկետուհիք<sup>2)</sup> հետևում էին փախուստի դիմած իրենց հովանաւորներին՝ ընտանիքի, կրտսի և, մանավանդ, սեփականութեան այլ սյուներին... Աշխատող, մտածող, մարտնչող, արյունաքամ յեղող, բայց իր պատմական նախաձեռնութեան վողեչունչ գիտակցութեամբ փայլող Փարիզը համարյա մոռացել էր իր պատերի տակ կանդնած մարդակերներին՝ ամբողջապես նվիրված լինելով նոր հասարակութուն կառուցելու գործին»:

Այդ ըուպեյին միակ կադմակերպութեանը, վոր փոքրիշտոն միացնում էր Փարիզում մնացած ու բաժան-բաժան յեղած մաս-

1) Կառավարական բանակի զենքեր:

2) «Բարձր դաս»՝ պոռնիկուհիներ:



տային, ազգային գլխադիրային կենտրոնական կոմիտեն եր, վոր ստիպված եր կառավարական պարտականութիւններն իր վրա վերցնել:

Բայց թե ումնից եր բաղկացած Ազգային գլխադիրային կենտրոնական կոմիտեն:

Կոմունայի պատմագիրներէից մեկը, հեղինակով զլուսը կորցրած փարիզի բնակչին՝ հետազայում գրում եր, թե Փարիզը վոչ միայն անհայտութիւն եր ապրում, այլև անհայտ մարդկանց եր պատկանում: Մնանուն մի կառավարութիւն եր գոմարված, վոր համարյա բացառապէս հասարակ բանվորներէից կամ մանր-մունր ծառայողներէից եր բաղկացած, վորոնց յերեք քառորդին հենց փողոցից կամ արհեստանոցից գենը ճանաչող չկար: Ինչ տեսակետից ել ուզում ե լինի, այստեղ անլուր ու սարսափելի մի բան կար... Կառավարութեան մեջ տիրող դասակարգերէից վոչ մի ներկայացուցիչ չկար: Բռնկվել եր մի հեղափոխութիւն, վոր չէր ներկայացված վոչ մի փաստաբանով, վոչ մի պատգամավորով, վոչ մի ժուրնալիստով, վոչ մի գեներալով: Նրանց տեղը բռնում եյին սեվագործ բանվորները, կազմարարը, խոհարարը և այլն:

Կենտրոնական կոմիտեն վորոշել եր, վոր իր իշխանութիւնը կազմապահի միայն այնքան, մինչև վոր ստեղծվի այնպիսի մի որդան, վորին կընտրի վողջ ապստամբ Փարիզը, այսինքն՝ հեղափոխական կոմունան, կամ համաքաղաքային խորհուրդը:

Կոմունայի ընտրութիւնները, վոր նշանակված եյին մարտի 26-ին, մեծ վոզեւորութեամբ տեղի ունեցան, և Կոմունայի հաջակումը համաժողովրդական ցնծութեամբ ընդունվեց:

Կոմունայի կազմը խայտարեկտ եր: Կոմունայի Խորհրդի մեջ մտած 83 մարդկանց կետից պակասը բանվորներն եյին կազմում: Մնացածը մանր-մունր ծառայողներ եյին, ինտելիգենցիան ու մանր բուրժուազիան: Սոցիալիստները նույնպէս Կոմունայում փոքրամասնութիւն եյին կազմում ու բաժանվել եյին զանազան Ֆրակցիաների:

Կոմունայի ամենափայլուն գլուխն Ինտերնացիոնալի փարիզի սեկցիայի ղեկավար կազմարար բանվոր ՎԱՐԼԵՆՆ եր՝ հա-

մարված սոցիալիստն ու հեղափոխականը, վոր Մարքսի հետ նամակագրութիւններէ մեջ եր:

Կոմունայի այս խայտարեկտ կազմը, նրա թույլ տված սխալների պատճառն եր: Ճիշտ ե՝ խոշոր բուրժուազիան փախել եր և Կոմունան փաստորեն պրոլետարիատի ու մանր բուրժուազիայի կազմակերպութիւն եր, բայց և այնպէս պետք եր նախատեսել, նկատի առնել, վոր բուրժուազիայի մնացած դործակալները մասամբ կարող են ազդել ընտրութիւններէ արդիւնքներէ վրա: Կենտրոնական կոմիտեն չափազանց շատ շտապեց իշխանութիւնն իրենից վերցնել՝ վստահելով համայն քվեարկութեանը:

Յեւ, համենայն դեպս, Կոմունան սաղմի մեջ, ինչպէս Մարքսն եր հետազայում գրում, դարձավ «բանվոր դասակարգի կառավարութիւն»:

Այսպէս՝ մարտի 18-ը դարձավ այն օրը, յերբ բանվոր դասակարգն իր ազատագրման համար պայքարելիս աշխարհի մեծագույն քաղաքներէից մեկում առաջին անգամ իշխանութիւնն իր ձեռքն առավ և նպատակ դրեց տապալել բուրժուազիայի դասակարգային տիրակալութիւնը:

Կոմունայի ընտրութիւնից հետո Ազգային գլխադիրային Կենտրոնական կոմիտեն մի կոչով դիմեց Փարիզի բնակչութեանը, վորով մանր բուրժուազիային ու ինտելիգենցիային հրավիրում եր՝ մինչև վերջ բանվոր դասակարգի հետ լինել:

«Փարիզի՝ քաղաքացիներ, — ասվում եր այդ կոչում, — մոտենում են հերոսութեան ու վեհ քաջարութեան մեծ օրերը: Յերկրի բախտն ու ամբողջ աշխարհի ապագան ձեր ձեռքումն ե...

Բանվորներ՝... Մեծ պայքար տեղի (ունի) ձրիակերութեան ու աշխատանքի միջև, շահագործման ու արտադրութեան միջև: Յեթե դուք հոգնել եք տգիտութեան մեջ քարանայուց և աղքատութեան մեջ ապրելուց, յեթե դուք ուզում եք, վոր ձեր վորդերն իրենց աշխատանքի պտուղներից ոգտվող մարդ բառնան և վոչ թե արհեստանոցի համար ու դորանոցի համար ընտելացրած մարդ, վոր իրենց քրոյինքով շահագործողների հարստութիւնն են ստեղծում և ինչ վոր մի բռնակալի համար իրենց արյունը թափում, յեթե դուք չեք ուզում, վոր անհրաժեշտ հսկողու-



թյունից ու դաստիարակությունից զրկված ձեր աղջիկները բա-  
վականության դործիք դառնան փողի արխտոկրատիայի ձեռ-  
քին... յեղե՛ք համարձակ. բանվորնե՛ր, ապստամբեցե՛ք, և թող  
ձեր հուժկու բազուկները տապալեն անարդ օճակցիան:

Փարիզի՛ քաղաքացիներ... բոլորդ, ով աշխատում է և աղ-  
նիվ ճանապարհով փնտրում սոցիալական պրոբլեմների լու-  
ծումը: Կենտրոնական կոմիտեն ձեր վրա յերգում է դնում՝ սեղմ  
չարքերով գնալ դեպի առաջադիմություն, վոգեկորվելով հայ-  
բենիքի վիճակով և նրա համաշխարհային հանճարով:

Կենտրոնական կոմիտեն հաստատ հավատում է, վոր Փարի-  
զի հերոս բնակչութունն իր անունը կանմահացնի և ամբողջ  
աշխարհը կվերածնի:

Կեցցե՛ հանրապետությունը: Կեցցե՛ Կոմունան»:

#### ԿՈՄՈՒՆԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԻՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱ- ՅԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Փարիզի կոմունան ընդամենը 72 որ գոյություն ունեցավ:  
Այդ ամբողջ ժամանակ Կոմունան ստիպված էր աշխատել պա-  
շարված քաղաքում: Բխմարկն ու Տյերն ուղղակի համաձայ-  
նություն եյին կնքել ընդդեմ Փարիզի բանվորների: Բխմարկը  
խոստացել էր թույլ չտալ, վոր Փարիզ պարեն մտնի և չթողնել  
ճակատից՝ վոչ մի փախստական Գերմանիա անցնի: Նա գերմա-  
նական գերությունից ավելի քան հարյուր հազար Փրանսիացի  
գինվոր ազատ արձակեց, վորոնք պատկառելի ուժ հանդիսացան  
Վերսալի բանակի համար:

Անցքերը լուծյամբ դիտող գերմանական բանակի աչքի  
առաջ Կոմունան պայքար պետք է մղեր Վերսալի դեմ: Այս բա-  
նը համարյա Կոմունայի բոլոր ուժերը խլում էր, և նրա դոր-  
ծունեյությունը միանգամայն անհնար կլիներ, յեթե ապստամբ  
քաղաքի բնակչութունը դարմանալի հերոսություն չցուցաբե-  
րեր: Այդ բնակչութունն անվեհեր տոկունությամբ տանում էր  
պաշարման, քաղցի ու ուժեղացման թուր սարսափները:

Կոմունայի գործունեյությունը վորոչ ծրագիր չունեւ: Ռազ-  
մական ճամբարի այս պայմաններում հապճեպ, դիպվածից-դիպ-

ված կոմունան միջոցներ էր ձեռք առնում ու դեկրետներ հրա-  
պարակում, վոր և բնորոշում են Կոմունան վորպես պրոլետա-  
րիատի դիկտատուրայի առաջին սաղմը պատմության մեջ:

Ամենից առաջ Կոմունայի խորհուրդն (ստիպված էր պայ-  
քարել չինովնիկների կադմակերպված ու մասսայական նենգա-  
դուլի դեմ և կարգավորել հսկայական քաղաքի կանոնավոր  
կյանքը:

Տյերի կառավարությունը բոլոր միջոցները ձեռք էր առնում,  
վոր Փարիզը կառավարելու ամբողջ մեխանիզմը կադմալուծի,  
քանդի, քաղաքը կատարյալ քայքայման հասցնի: Վերսալի կա-  
ռավարությունը հրամայում էր քաղաքացիական ու զինվորա-  
կան բոլոր իշխանություններին՝ Փարիզի հեղափոխական իշխա-  
նությունների վոչ մի կարգադրությունը չկատարել և բոլոր պե-  
տական գումարներն ուղարկել Վերսալ:

Պետական ապարատի չինովնիկների նենգադուլն այն տեղն  
էր հասել, վոր, որինակ, փոստի գերատեսչության բոլոր չինով-  
նիկները փախել էյին, դրամարկները դատարկված էյին, փոս-  
տանիչներ չկային, և փոստի սայլերը դադտագողի ուղարկված  
էյին Վերսալ: Նենգադուլ էյին անում նույնիսկ բժշկական ու  
դպրոցական աշխատակիցները: «Բժիշկներն ու ծառայողները, —  
գրում է Լիսազարեն, — լքել էյին հիվանդանոցները... Նրանց  
հիվանդներից շատերն ստիպված էյին մուրացկանության դիմել:  
Գործադուլին միացավ նաև բժշկական միջին կազմը: Նորեկ հի-  
վանդները հիվանդանոցների շենքերի դռան առաջն էյին սլառ-  
կում»:

Այսպիսի պայմաններում Կոմունայի գործիչները, մանա-  
վանդ պատգամավորների պաշտոնի, աշխնքն՝ դանազան միևի-  
տրությունների ու գերատեսչությունների կառավարիչների պաշ-  
տոնի նշանակված բանվորներն ամբողջ աշխարհին ապացուցե-  
ցին, թե ի՞նչ հսկայական կադմակերպչական ընդունակություն-  
ներ ունի բանվոր դասակարգը: Բրոնզագործ վարպետ Կամելի-  
նան դրամահատարանի ղեկավար էր դրված և իսկույն կադմակեր-  
պեց վոչ միայն փոստանիչներ տպելու գործը, այլև արծաթե  
ձուլածոներից դրամ հատելու գործը, ձուլածոներ, վոր հաջողվեց  
ձարել Փրանսիական բանկում: Փորագործ բանվոր Տեյսը վերա-



կանգնեց փոստի դերատեսչության գործունեությունը: Ատաղ-  
ձագործ Պենդին վերականգնեց տպարանի աշխատանքը, բան-  
վոր վարիչներ համբարակային վարչություն գլուխ անցավ, մի  
վարչություն, վոր Փարիզի կոմունային միջերջներ եր մատակա-  
րարում: Վերջապես աշխատանքի ու փոխանակության հանձնա-  
ժողով եր կազմակերպվել, վոր գրեթե ամբողջապես սոցիա-  
լիստ բանվորներեց եր բաղկացած, և այդ հանձնաժողովի գլուխ  
եր կանգնած, այսինքն՝ Կոմունայի մինիստրի պաշտոնում՝ վոս-  
կերիչ բանվոր Ֆրանկելը:

Բացի չինովնիկների ու ինտելիգենցիայի զգալի մասի նեն-  
դագուլի դեմ պայքարելուց, Կոմունան ամբողջ ժամանակ ստիպ-  
ված եր պայքարել հակահեղափոխության դեմ:

Փարիզը լիքն եր վերսալի գործակալներով ու ամեն տեսա-  
կի դավադիրներով: Վերսալցիներն անխնա զնդակահարում ե-  
լին գերի կոմունարներին: Նրանք հակահեղափոխական դավա-  
դրություններ էլին սարքում՝ նպատակ ունենալով գրավել քա-  
ղաքի կարևոր կետերը: Վերսալցիների գործակալներն ու լրտես-  
ները աշխատում էլին խցկվել Կոմունայի ռազմական որդան-  
ները: Վերջապես Կոմունան վորոշեց իրեն պատանդ բանտա-  
կել Փարիզի մի շարք հետադիմականների, բայց ակզբից նրանց  
նկատմամբ բոլորովին անտեղի մեղմություն ցույց տրվեց: Պա-  
տանդները գնդակահարվեցին միայն ամենավերջին օրերը՝ յերբ  
վերսալցիները ջախջախեցին Փարիզը:

Վերսալցիներից պաշտպանվելով, հակահեղափոխության ու  
նենդագուլի դեմ պայքարելով, Կոմունան ձեռնամուխ յեղավ  
պետական հին ապարատը՝ աշխատավորությանը շահագործե-  
լու ապարատը քանդելուն, մի ապարատ, վորը Ֆրանսիական  
բուրժուազիայի ստեղծածն եր: Արդեն մարտի 20-ին, մինչև  
Կոմունայի ընտրությունը ղեկրեա հրատարակվեց հին, կանո-  
նավոր բանակը վոջնացնելու և ազգային գլխարդիայով, այսին-  
քն՝ Փարիզի պրոլետարիատի զինված մասսաներով ու նրանց  
հետևից գնացող մանր բուրժուազիայով փոխարինելու մասին:  
Այնուհետև վոջնացվեց նախկին քաղաքային վոստիկանությունը,  
և վոստիկանություն ընդհանրապես, այլև հին իշխանության ու  
դատական վոջլ ապարատը: Նոր դատավորներ էլին նշանակվում

բանվորներն ու արհեստավորները, վոր իրենց գործունեյու-  
թյամբ, մանավանդ բանվորների և քաղաքի չքավորության ու  
տերերի, տնատերերի ու բուրժուազիայի մյուս ներկայացուցիչ-  
ների միջև տեղի ունեցած վեճերի նկատմամբ ուղղակի դասա-  
կարգային մոտեցում էլին ցուցաբերում:

Բուրժուական պետության ապարատը վոջնացնելով՝ Կոմու-  
նան ձեռնամուխ յեղավ նաև մասսաների հոգևոր ճնշման գոր-  
ծիքների վոջնացմանը: Դեկրետ հրատարակվեց յեկեղեցին պե-  
տությունից բաժանելու, յեկեղեցու ոգտին ամեն տեսակ տուր-  
բերը վոջնացնելու մասին:

Յեկեղեցապատկան բոլոր ստացվածքները հայտարարվեցին  
Կոմունայի սեփականություն, իսկ յեկեղեցիներից շատերն ա-  
կումբների վերածվեցին: Կոմունան ձեռնամուխ յեղավ դպրոց-  
ների և ժողովրդական լուսավորության վոջլ սխտեմի վերակադ-  
մություն գործին, այդ գործից հեռացնելով տերտերներին ու  
վարդապետներին, վորոնք Նապալեոն III օրով գործի մեջ մեծ  
դեր էլին խաղում:

Սոցիալիստ բանվորների՝ Առաջին Ինտերնացիոնալի անդամ-  
ների ճնշմամբ՝ Կոմունան առանձին ուշադրություն դար-  
ձրեց բանվորների դրության վրա: Ապրիլի 16-ին Կոմունան վո-  
րոշեց բռնադրավել բոլոր այն գործարաններն ու արհեստանոց-  
ները, վորոնց տերերը—գեյլ փախել էլին, և հանձնել բանվորա-  
կան ընկերությունների կամ արտելների՝ կոլեկտիվ ոգտագործ-  
ման համար: Վորոշ ձեռնարկություններում բանվորական հրա-  
կողություն եր նշանակված, մյուս տեղերում ել Կոմունայի  
պատգամավորներից էլին նշանակված: Պարտադիր մինիմում  
եր նշանակված այն բանվորների համար, վոր Կոմունայի պատ-  
վերներն էլին կատարում, արգելված եր փոքրի ու բլիթագործա-  
տների գիշերային աշխատանքը, վերացվել էլին բանվորների  
վրա դրվող տուգանքները, միջոցներ էլին կիրառված արհմիու-  
թյուններ կազմակերպելու գործը խրախուսելու համար:

Միլիտարիզմի, այսինքն՝ հին զինվորականության և տիրող  
դասակարգերի նվաճողական քաղաքականության նկատմամբ Կո-  
մունան իր ատելությունն ընդգծեց այն բանով, վոր հանդիսա-

1128  
37





վոր կերպով քանդեց այն արձանը, վորը բուրժուադիան եր կանգնեցրել Նապալեոն I այսպես կոչվող՝ Վանդոմական սյունը:

Կառավարական միջոցառումների մեջ արտահայտվող պաշտոնական գործունեությունը զուգընթաց, Կոմունայի անդամները թերթերում ու միտինգներում յեռու պրոպագանդ ելին մղում: Իսկ Կոմունայի շարքային մասնակիցները, բոլորը—ծեր և մանուկ—ադիտացիա ելին մղում ամեն տեղ, վորտեղ կարողանում ելին, վորտեղ վեճ եր ծագում Կոմունայի հակառակորդներին հետ:

Կոմունայի մասնակիցներից մեկը փողոցի այսպիսի մի տեսարան ե գրի առել: Մի բուժ. ուսանող հրապարակում ամբոխի մեջ ճառախոսում ե.

— Ձայն'ը թե այս բոլորիս ամբողջ ժողովուրդը մի մարդու պես վտռել յե կանգնում Վերսալի դեմ: Զիշտ չի... Բժշկական գալորցում հենց նոր կայացած ժողովում ղեպլի մեծամասնությունը Կոմունայի դեմ արտահայտվեց... Ներկա յեղողներից մեկն ուսանողին հարցնում ե, թե ճանաչո՞ւմ ե արդյոք Փարիզի ինքնավարության իրավունքները: Ուսանողը պատասխանում ե, թե ինքնավարությանը դեմ չի, բայց Կոմունային դեմ ե:

— Յեթե վերջիվերջո մենք նույնիսկ համաձայն ել լինենք Կոմունային,— հայտարարում ե նա,— ապա այն պայմանով, վոր Կոմունան նոր մարդկանցից բաղկացած լինի: Մենք չենք ուզում ձեր ընտրյալներին ճանաչել:

— Ձեռաց յերևում ե, թե ինչ փորացավ ունենք,— վրա չե բերում մի ազգային զվարդիական,— Այդ Կոմունայի գլուխ չափազանց շատ բանվորներ են կանգնած, այնպես չե՞: Այդ պարոնները կուզեյին փաստաբանների, բժիշկների, բանկիրների, գեներալների ու անփականատերերի մի խառն ամբոխ տեսնել... Իսկ ինչ վերաբերում ե բանվորներին, վոր միայն իրանք գիտեն ու կարող են ներկայացնել բանվոր դասակարգը, ապա՝ վոչ մեկը:

Դիսկուսիան սկսում եր սպառնալի բնույթ կրել, և հետագեմ ուսանողի բանը վատ կլինեք, յեթե փողոցի մի յերեխա զվարձալի կատակով չընդհատեք այն:

Յերկաթուղային կոնդուկտորի նմանվելով՝ նա հանկարծ զղավում ե.

— Հատուկ դնացքը մեկնում ե Վերսալ: Բժշկական գալորցը զնում ե: Պարոն, ճամբորդներ, նստեցեք վագոնները:

Լսվում ե սուրոց ու յերևակայական շոգեքարչի տնքոց: Այս բանն ամբոխի մեջ ծիծաղ ե առաջ բերում: Բոլորը հեռանում են՝ թողնելով ուսանողին:

\*\*\*

Փարիզի Կոմունան միջազգային բանվորական շարժման գործում չըջադարձային մի կես ե հանդիսանում: Համաշխարհային պատմության մեջ պրոլետարիատն առաջինն իրականացրեց իր դիկտատուրան: Բանվոր մասսայի անոթինակ հերոսական խրադործությունն ու հանճարեղ նախաձեռնությունն ամփոփեցին համաշխարհային պրոլետարիատի հեղափոխական վողջ նախորդ փորձը և նրա պատմության մեջ մի նոր ել բաց արին: 1871 թ. մարտի անմոռանալի օրերը մասսաներին դասակարգային պայքարի այնպիսի մի ակնառու դաս տվին, վոր համաշխարհային պրոլետարիատը մինչ այդ չեր ունեցել:

Պրոլետարիատի և վողջ աշխատավորության մեծ առաջնորդներն ուշիուշով ուսումնասիրում ելին Կոմունայի գործը:

Մարքսը, վոր հրձվանքով եր վողջունում «յերկինքը գրոհող» Կոմունարների հերոսությունը, ուշիուշով ուսումնասիրում եր այդ պատմական փորձը, այնտեղից դասեր վերցնելով համաշխարհային պրոլետարական հեղափոխության համար, խառապես վերլուծելով Կոմունայի սխալները:

Ահալասիկ այն ամենազլխավոր յեղրակացությունը, վոր Մարքսն ու Ենգելսն արին Կոմունայի փորձերից.

«... Բանվոր դասակարգն ուղղակի ձևով չի կարող տիրապետել պետական պատրաստի մեքենան և բանի գեցել իր անփական նպատակների համար»:

Փարիզի Կոմունան խորտակեց այդ մեքենան: Նա վոչ միայն խորտակեց չահագործող դասակարգերի տիրակալության ռադմա-բյուրոկրատական ապարատը, այլև իրականացրեց պրո-



լեւտարական պետական նոր ուժը, այսինքն՝ տիրող դասակարգ դարձած՝ զինյալ պրոլետարիատի ուժը: Կոմունան աշխատում էր, թեև անբավարար, ջանքերով բուրժուազիայի ընդիմադրութիւնը, ճնշել պրոլետարիատի թշնամիներին և սկսել բուրժուազիայի դասակարգային տիրակալութեան տնտեսական հիմքերը կործանել:

Այս մեծ փորձը Կոմունայի կողմը դրավեց Փարիզի մոլոլ աշխատավոր ու շահագործվող մասսայի համակրանքն ու ոժանդակութիւնը: Միայն մատուցական չարժուժը, Փարիզի մոլոլ պրոլետարիատի ապստամբութիւնը, վորը տեղի ունեցավ մարտի 18-ին, հնարավորութիւն տվեց Կոմունան ստեղծելու: Մասնակցների ակտիվութիւնը, նրանց մասնակցութիւնը ապստամբութեանը, նոր հեղափոխական իշխանութեան աշխատանքներին նրանց ներգրավուելը, նրանց քաղաքական դաստիարակութիւնը, — այս բոլորը կարևորագույն նախապայման էր հանդիսանում պրոլետարական հեղափոխութեան գործում հաջթանակ տանելու համար:

Ահապահիկ պատմական այդ մեծ փորձի դասերը, վոր հրակայական նշանակութիւն ունեն համաշխարհային պրոլետարիատի հետագա մոլոլ պայքարի համար:

Կոմունան պրոլետարիատի դիկտատուրայի ազդմնաձևն էր, պրոլետարական պետութեան ազդմնաձևը: Այս ձևն արթնացրեց հեղափոխական մասսաների հանճարեղ բնաղը: Քաղաքականապես զեռ չ'հասունացած Փարիզի պրոլետարիատը չկարողացավ այդ ձևը հեղափոխականորեն ոգտագործել իր դասակարգային շահերի համար: Բայց Կոմունան պարզ կերպով դժեց այն ուղին, վորով պրոլետարիատը պետք է ընթանա, վոր ալդպիսի, յեթե վոչ առավել սարսափելի, պարտութիւն չկրի:

#### ԿՈՄՈՒՆԱՅԻ ՍԽԱԼՆԵՐՆ ՈՒ ՆՐԱ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԸ

Կոմունայի մեծագույն զժբախտութիւնը, վոր արագացրեց նրա կործանումն ու ծանրացրեց նրա պարտութիւնը, իսկական հեղափոխական ղեկավարութիւնը, իր ներքին դիսցիպլինայով միաձուլված կուսակցութեան բացակայութիւնն էր:

Պարզ ծրագիր ու հաստատակամ միասնական ղեկավար կուսակցութիւն չունենալը, — վորը կարողանար քաղաքականապես դաստիարակել, միաձուլել ու գլխավորել մանր ձեռնարկութիւնների մեջ փռիացած Փարիզի պրոլետարիատին, — Կոմունայի մեջ ներքին պայքար ու բազմիշխանութիւն ստեղծեց: Այս բանը մի շարք ճակատագրական սխալների դուռ բաց արեց: Բայց և այնպես, դասակարգային բնաղը մղում էր Կոմունային ղեկի դիկտատուրայի ուղին, ղեկի դասակարգային քաղաքականութեան ճիշտ ուղին: Ահա թե ինչու Կոմունան, չնայած իսկական ղեկավարութիւն չլինելուն, հաճախ միանգամայն իրավացի յեր վարվում: Վորովհետև, ինչպես Նոգելման էր շատ տարիներ առաջ ասում, յերբ իշխանութիւնը դիկտիրինյորներին՝ ձեռքն էր ընկնում, նրանք անում էին «պատմութեան իրոնիայով հենց հակառակն այն բանի, ինչ նրանց դպրոցական դոկտրինան էր թելադրում իրենց»:

Կոմունայի առաջին և կարևորագույն ախառն այն էր, վոր վերապցիւնների հանդեպ վարած պատերազմական գործողութիւնների մեջ նա բավարար չափով յեռանդ չցուցաբերեց: Մարտի 18-ից հետո աչքաթող էր արվել մի գլխավոր մոմենտ. կառավարութեանը թույլ տվին հանդիստ կերպով քաշվել Վերսալ և իր հետ զինվորներ տանել: Այդ ժամանակ կառավարութեանն ուժեղ չէր և նրան ջանքերով չափազանց հեշտ էր:

Թե՛ այս բոլորից հետո, առանց հասկանալու, թե այսպիսի մոմենտներին ամենալավ քաղաքականութիւնը հարձակողականն է, վոր ամեն մի «ուշացում համասարադոր է մահվան», Կոմունան հույս ունենալով քաղաքացիական կռիւից խուսափել, չափազանց խաղաղ էր գործում:

Այսինչ, հանդիստ առնելով՝ հետադիմական Վերսալն ուժերը համաբեց և գերմանական զերութիւնից վերադարձած զինվորներից բանակ կազմեց, վորին ամեն կերպ լարում էր Փարիզի բանվորների դեմ: Մարտի նետվեցին նաև նախկին կայսերական զենեւաւորները, վորոնք ուղում էին բանվորների դատառտանը տեսնելիս ցույց տալ «զինվորական քաջութիւն» և վերա-

1) Այսինքն կրթական, կյանքից կտրվածների տեսաբանների:



դարձնել Գերմանիայի դեմ վարած պատերազմի ժամանակ իրենց կորցրած «փառքը»։ Յեւ վերստին իրենք պատերազմական գործողություններ սկսեցին, Կոմունան անվճարկանություն ցուցաբերեց, դժվարություններ կրելով պրոլետարիատին նվիրված հրամանատարական կազմի պակասությունը, բազմիչխանությունից, ինչպես և միասնական ղեկավարության բացակայությունից։

Կոմունայի մյուս հսկայական սխալն այն էր, վոր բուրժուական սեփականությունը՝ մասնավոր և հասարակական՝ շատ զգուշ վերաբերվեց։ Կոմունան վոչ միայն չունեցրկեց բոլոր ֆաբրիկներն ու գործարանները, այլև չբռնադրավեց պետական բանկում՝ ֆրանսիական վողջ բուրժուազիայի այդ գլխավոր գանձարանում պահվող դրամը։ Բանկի վարչությունը չէր ուղում հնազանդվել Կոմունային։ Դրամ չլինելը ջլատեց Կոմունային։ Յեթե Կոմունան բանկը գրավեր, վերստինների վրա ցընցող ազդեցություն կունենար։ Այս բանը նրանց ուժապատկաներ։

Կոմունան բավականաչափ վճռականությունը ու յեռանդով չպայքարեց հակահեղափոխական մամուլի և իրենց՝ հակահեղափոխականներին—Փարիզում յեղած՝ Վերսալի գործակալների դեմ։ Կոմունայի դերի վերցրած պատանդները զնդակահարվեցին Կոմունայի գոյության վերջին օրերին միայն։ Այն ժամանակ միայն, յերբ Վերսալի կառավարությունը վճռական հարձակում օկեց Փարիզի վրա, յերբ դերի կոմունարների մատայական զնդակահարություն սկսեց, Կոմունան ավելի վճռական միջոցների գլխեց՝ ընդդեմ հակահեղափոխական մամուլի ու ժողովների։ Այն ժամանակ միայն Կոմունան վորոչեց վոչնչացնել Տյերի սեփական տունը և նրա բոլոր հարստությունները բռնադրավել Կոմունայի կարիքների համար։

Վերջապես արտաքին աշխարհից բոլորովին կտրված լինելով մեկտեղ՝ Կոմունան ավելի յեռանդ կարող էր ցուցաբերել դավառների հետ հարաբերության պահպանելու, մասնավոր գյուղացիների մեջ պրոպագանդ մղելու գործում։ Այս ագիտացիայի առանձին փորձերը յեղան։ Գյուղացիներին ուղղված թուղթիկը, վոր սոցիալիստուհի Անդրե Լեոյի գրածն էր, ցրվում էին

նույնիսկ ողապարիկից։ Բայց այդ քիչ էր։ Բանվորների ու գյուղացիների միությունը վողջ կարևորությունն ավելի պարզ հասկանալու դեպքում, ավելի յեռանդուն ու կտրուկ ագիտացիա մղելու դեպքում, Կոմունան, անկասկած, զգալի հաջողություն կունենար։

Մի քանի քաղաքներում բանվորները փորձեցին Կոմունան պաշտպանել, բայց այդ փորձերը շատ անջատ—անջատ էյին ու քիչ կազմակերպված։ Գյուղացիական շրջաններից մի քանիսում ցույցեր տեղի ունեցան կարմիր դրոշակներով ու հետեյալ լուգունգով. «Կեցցե Կոմունան»։ Գյուղացիական չքավորությունը, անկասկած կպաշտպաներ Կոմունան, յեթե նրան լացատրեցին, թե բանվորների կառավարությունն ինչ կարող է տալ գյուղացիությանը։ Մարքսը գրում էր. — «Կալվածատերերը շատ լավ էյին հասկանում, վոր յեթե Կոմունայի Փարիզն ազատ կերպով հաղորդակցություն ունենա դավառի հետ, ապա մի յերեք ամսվա մեջ գլխովին ապստամբություն կընկնի»։

Ճիշտ է՝ Վերսալի կառավարությունը Փարիզն ամբողջ յերկրից կտրել էր, վորպեսզի «խանգարի վարակի տարածվելուն», բայց և այնպես այդ ողակումը պատուելու համար Կոմունան շատ քիչ ջանք թափեց։ Բայց վոր այդ կարելի յեր, յերեւում է թեկուղ հենց այն բանից, վոր Կոմունայի վորոչ անդամներ ու սոցիալիստներ ամբողջ ժամանակ կապ էյին պահպանում I Ինտերնացիոնալի գլխավոր խորհրդի հետ, վոր Լոնդոնում էր, մանավանդ Մարքսի հետ։ Մարքսի թղթակիցներից մի քանիսը Լոնդոնից դիտմամբ գալիս էյին Փարիզ։ Փարիզից կոմունարները՝ Մարքսի հետ բանակցելու համար՝ Լոնդոն ուղարկեցին ռուս սոցիալիստ Լավրովին։ Մարքսն իր կողմից Կոմունայի հետ բավականին կանոնավոր կապ ստեղծեց իրեն համակրող Գերմանիայի մի վաճառականի միջոցով, վորը թե պրոպագանդ հրամանատարության և թե վերսալցիների կարծիքով կառկած էր։ Կոմունայի այս բոլոր սխալները բազմիցս չեւտել են համաշխարհային պրոլետարիատի մեծ ուսուցիչներն ու առաջնորդները։



Վերսացիներն իրենց ուժերը յեռանդուն կերպով պատրաստում էին: Կառավարութեան գործակալներն ու բուրժուական թերթերը գյուղացիների մեջ ամբաստանական կատաղի ազդեցությամբ էին անում՝ կոմունարների մասին նրանց ամեն տեսակ սարսափներ ու չտեսնված բաներ պատմելով: Զինվորների որսապահին ավելացրին, նրանց զինի էյին խմեցնում ու զորանոցներում ապաների հետ փակած պահում, և սպաները նրանց հրահրում էին կոմունարների դեմ: Մայիսի կեսերին 30 հազար կոմունարի դեմ Տյերը արդեն կարող էր 150 հազար մարդ հանել:

Մայիսի մեջ վերսացիներն աստիճանաբար, մեկը մյուսի հետևից դրավում էին Փարիզի շրջակայքի ամբողջությունների դիրքերը: Մայիսի 21-ին Վերսալի դուռներն աննկատելի կերպով մտան քաղաքը: Այդ որից սկսվեց «արյունահեղ շաբաթը», վոր վերջացավ մայիսի 28-ին՝ Կոմունայի վերջին պաշտպանների պարտութիամբ:

Վերսացիները քաղաք մտան արեմուտքից, վորտեղ արիստոկրատական թաղերն էին: Այնտեղ նրանք շատ թույլ դիմադրություն հանդիպեցին: «Այդ դիմադրությունը, — գրում էր Ենգելսը, — այնքան ավելի համար և ուժեղ էր դառնում, վորքան դուրքերն ավելի էին խորանում դեպի մայրաքաղաքի արեւմելյան մասը՝ բանվորական քաղաքը: Ութնորյա պալատից հետո միայն Բելվիլի ու Մանիլմոնտանի<sup>1)</sup> բարձունքներում ընկան Կոմունայի վերջին պաշտպանները. անդեն աղամարդկանց, կանանց ու յերեխաների սպանությունն այժմ իր դադարեցնակետին հասավ»:

Մայիսի լույս 23-ի գիշերը քաղաքը ծածկվեց բարիկադներով, վորոնց կառուցման ու պաշտպանության դործին մասնակցում էին նույն իսկ կանայք ու յերեխաները: Մայիսի 25-ին լույս տեսավ Կոմունայի վերջին կոչը, վոր ասում էր.

1) Բանվորական թաղեր, վոր ինչպես և Մոնմարտը, ընկած էին Փարիզի ծալքաձևերի բարձունքներում:

«Հասել և թշնամու հետ կատաղի պայքար մղելու ժամը մի թշնամի, վոր արդեն յերկու ամիս է, ինչ մեր դեմ անողոք պատերազմ է մղում: Յեթե մենք ջախջախվենք, դուք գիտե՞ք, թե ինչ վիճակ է սպասում մեզ: Արդ՝ դեպի զե'նք, և ձեռքից բաց չթողնենք այն, մինչև չհաղթենք... Մի՛ սպասեք, վոր Բելվիլին ինքը գրոհի յենթարկվի. այն ժամանակ դուք երբեք ուչ լինի: Առաջ, և Բելվիլը միանգամ ևս հաղթող կհանդիսանա»:

Առաջնորդների սխալները, նույնիսկ վորոշ զինվորական հրամանատարների դավաճանությունը չկարողացան յերեքել կոմունարների այն արիությունը, վորով նրանք կոչում էին դադանացած վերսացիների դեմ:

Վերջին լիցը դատարկելով՝ նրանք մեռնում էին Վերսալի դահլիճների գնդակներից, գոչելով՝ «կեցցե՛ Կոմունան»: Մինչ այդ չտեսնված հերոս կոմունարների այդ պայքարում նրանց ոգնում էին Փարիզի հերոսական կանայք: Բանվորներն ու բանվորների կանայք, վոր մարտի 18-ին առաջին իրենք ելին տաղնապ բարձրացրել և սկսել յետ խել գողացած թնդանոթները, զինվորների հետ յեղբայրանալով՝ այդ կանայք Կոմունայի ամբողջ գոյությունը ընթացքում իրենց հայրերի, ամուսինների ու յեղբայրների մեջ պաշտպանում էին արիությունն ու հեղափոխական յեռանդը, ծաղրում էին փոքրոգիներին, պայքարի էին հրահրում տատանվողներին և իրենք էին ճակատ վազում: Յերբ աղբիլին Տյերն սկսեց Փարիզը ոմբակոծել, Փարիզի մի խումբ կանայք հրապարակեցին «կոչ՝ Փարիզի քաղաքացուհիներին»: Այս կոչի մեջ ասված էր.

«Փարիզն ողակված է: Փարիզը ոմբակոծվում է: Քաղաքացուհիներ: Լսո՞ւմ եք արդյոք դուք թնդանոթների վոռնոցն ու ահազանդի կոչը: Դեպի զե'նք: Հայրենիքը վտանգի մեջ է:

Այս ինչ է: Ուտարը նորից և ուզում Ծրանախան նվաճել: Վոչ, թշնամիներն են այդ, ժողովրդի ու աղատության սպանողներն են այդ՝ Փրանսիացիք: Մեր թշնամիները նրանք են, ով մեր քրտինքով և ապրել և մեր կարիքով ճարպակալել:

Քաղաքացուհիներ: Հասել և վճռական ժամը: Պետք է վերջ տալ հին աշխարհին... Մենք պետք է մեռնենք կամ հաղթենք...



Վերապրցիներն իրենց ուժերը յեռանդուն կերպով պատրաստում եյին: Կառավարութեան գործակալներն ու բուրժուական թերթերը գլուղացիների մեջ ամբաստանական կատաղի ազդեցիկ եյին անում՝ կոմունարների մասին նրանց ամեն տեսակ սարսափներ ու չտեսնված բաներ պատմելով: Զինվորների որսալահիկն ավելացրին, նրանց զինի եյին խմեցնում ու զորանոցներում սպաների հետ փակած պահում, և սպաները նրանց հրահրում եյին կոմունարների դեմ: Մայիսի կեսերին 30 հազար կոմունարի դեմ Տյերը արդեն կարող եր 150 հազար մարդ հանել:

Մայիսի մեջ վերապրցիներն աստիճանաբար, մեկը մյուսի հետևից դրավում եյին փարիզի շրջակայքի ամբուլթյունների դիրքերը: Մայիսի 21-ին Վերսալի զորքերն աննկատելի կերպով մտան քաղաքը: Այդ որից սկսվեց «արյունահեղ շաբաթը», վոր վերջացավ մայիսի 28-ին՝ Կոմունայի վերջին պաշտպանների պարտութեամբ:

Վերապրցիները քաղաք մտան արևմուտքից, վորտեղ արիստոկրատական թաղերն եյին: Այնտեղ նրանք շատ թույլ դիմադրութեան հանդիպեցին: «Այդ դիմադրութիւնը, — գրում եր Նեդերը, — այնքան ավելի համառ և ուժեղ եր գտնում, վորքան զորքերն ավելի եյին խորանում դեպի մայրաքաղաքի արևմտյան մասը՝ բանվորական քաղաքը: Ութնորշա պալատից հետո միայն Բելվիլի ու Մանիքոնտանի<sup>1)</sup> բարձունքներում ընկան Կոմունայի վերջին պաշտպանները. անդեն աղամարդկանց, կանանց ու յերեխաների սպանութիւնն այժմ իր գաղաթնակետին հասավ»:

Մայիսի լույս 23-ի դիւերը քաղաքը ծածկվեց բարիկադներով, վորոնց կառուցման ու պաշտպանութեան գործին մասնակցում եյին նույն իսկ կանայք ու յերեխաները: Մայիսի 25-ին լույս տեսավ Կոմունայի վերջին կոչը, վոր ասում եր.

1) Բանվորական թաղեր, վոր ինչպես և Մոնտմարտը, ընկած եյին փարիզի ծայրամասերի բարձունքներում:

«Հասել ե թշնամու հետ կատաղի պայքար մղելու ժամը մի թշնամի, վոր արդեն յերկու ամիս ե, ինչ մեր դեմ անողոք պատերազմ ե մղում: Յեթե մենք ջախջախվենք, դուք գիտե՞ք. թե ինչ վիճակ ե սպասում մեզ: Այդ՝ դեպի դե՛նք, և ձեռքից բաց չթողենք այն, մինչև չհաղթենք... Մի՛ սպասեք, վոր Բելվիլն ինքը գրոհի յենթարկվի. այն ժամանակ դուք երդեն ու լինի: Առաջ, և Բելվիլը միանգամ ևս հաղթող կհանդիսանա»:

Առաջնորդների ախալները, նույնիսկ վորոշ զինվորական հրամանատարների դավաճանութիւնը չկարողացան յերեքել կոմունարների այն արիւթիւնը, վորով նրանք կոխում եյին դաշանացած վերապրցիների դեմ:

Վերջին լիցը դատարկելով՝ նրանք մեռնում եյին Վերսալի դահլիճների գնդակներից, դռնէլով՝ «կեցցե՛ կոմունան»: Մինչ այդ չտեսնված հերոս կոմունարների այդ պայքարում նրանց ոգնում եյին փարիզի հերոսական կանայք: Բանվորներն ու բանվորների կանայք, վոր մարտի 18-ին առաջինն իրենք եյին տաղնապ բարձրացրել և սկսել յետ խլել գողացած թողանոթները, զինվորների հետ յեղբայրանալով՝ այդ կանայք Կոմունայի ամբողջ գոյութեան ընթացքում իրենց հայրերի, ամուսինների ու յեղբայրների մեջ պաշտպանում եյին արիւթիւնն ու հեղափոխական յեռանդը, ծաղրում եյին փոքրողիկներին, պայքարի եյին հրահրում տատանվողներին և յրենք եյին ճակատ վազում: Յերբ ապրիլին Տյերն սկսեց փարիզը ոմբակոծել, փարիզի մի խումբ կանայք հրապարակեցին «կոչ՝ փարիզի քաղաքացուհիներին»: Այս կոչի մեջ ասված եր.

«Փարիզն ողակված ե: Փարիզը ոմբակոծվում ե: Քաղաքացուհիներ: Լսո՛ւմ եք արդյոք դուք թողանոթների վրանոցն ու ասհաղանդի կոչը: Դեպի դե՛նք: Հայրենիքը վտանգի մեջ ե:

Այս ի՞նչ ե: Ոտարը նորից ե ուզում Ֆրանսիան նվաճել: Վոչ, թշնամիներն են այդ, ժողովրդի ու աղատութեան սպանողներն են այդ՝ Ֆրանսիացիք: Մեր թշնամիները նրանք են, ով մեր քրտինքով ե ապրել և մեր կարիքով ճարպակալել:

Քաղաքացուհիներ: Հասել ե մոռական ժամը: Պետք ե վերջ տալ հին աշխարհին... Մենք պետք ե մեռնենք կամ հաղթենք...



Դեպի Փարիզի դարպասները, դեպի բարեկազմները, դեպի ար-  
վարձանները, ուր վոր պատահի:

Յեթե գերիներին գնդակահարող ու մեր առաջնորդներին  
սպանող անդամներն անդեն կանանց սմբոխին համադարկ տան,  
ավելի լավ: Վողջ Թրանսիայի և ամբողջ աշխարհի սարսափի  
ազդակն ու զայրույթը կավարտեն այն, ինչ մենք սկսել ենք:  
Յեթե ամբողջ գնեքն ու ավինը մեր յեղբայրները վերցրել են,  
ապա մեզ բաժին է մնում սալարկի խճաքարը, վորպեսզի այդ  
քարերով խփենք դավաճաններին»:

Հուսահատական պայքարում, յերբ բանվորները պաշտպա-  
նում էին յուրաքանչյուր թաղամաս, յուրաքանչյուր տուն,  
յերբ հաղթողներն խսկույն սկսում էին գերիների դատաստանը  
տեսնել ու գնդակահարում էին վոչ միայն բանվորներին, այլև  
նրանց կանանց ու յերեխաներին, վորոնց անխնամ էին «գայ  
լուհիներ ու զայրաճուտեր» կանայք կռվում էին տղամարդ-  
կանց հետ կողք կողքի: Ահա թե ինչպես է պատմում Կոմունա-  
յի պատմագիրները մեկը կանացի բատալիոնի մասին:

«Բայաջ հրապարակում կանանց բատալիոնը հերոսուհի  
Լուիզա Միշելի ու ուրա Կոմունարուհի Դիտրեայի հրամանատա-  
րությամբ, վոր նախորդակին արդեն Բատինոլում եր կռվում,  
քաջության հրաքներ ցուցաբերեց: Յերբ այլևս անհնար եր  
գերքը պաշտպանել, բատալիոնը մի քանի հարյուր մետր փա-  
խալ հեռու՝ Պիզալ հրապարակը, վորտեղ նորից կռվեց հա-  
կառակորդի դեմ: Յեւլ այսպես՝ այդ դաժան պայքարը նորից  
սկսելու համար մի բարեկազմի մյուսը նահանջելով՝ այդ բա-  
տալիոնը կռվեց մինչև վերջին օրը»:

Հրդեհների, ծխի, հրաձգության դղրոցում վերավորների  
աղաղակներով եր վերջանում «արյունահեղ շաբաթը»: Մայիսի  
25-ի նախորդակին վերսալցիները քաղաքի չորս հինգերորդա-  
կան մասն արդեն զրավել էին: Մայիսի 26-ին միայն չորս  
բանվորական թաղ եր գերմանում, վորտեղ վերջին կոմունարները  
կռվում էին մինչև մահ: Մայիսի 28-ին ընկավ վերջին բարի-  
կադը: Մայիսի 29-ին գնդակահարում էին բոնած կոմունար-  
ներին՝ նրանց վերջին ապաստարանում՝ Պեր-Լաչեզ գերեզմա-

նատանը, այն պատի մոտ, վոր մինչև որս կրում է «Կոմու-  
նարների պատ» անունը:

Հաղթողները դործում էին ասես արյան բաղնիքում: Ահա  
թե ինչպես է նկարագրում այդ «հաղթութունը» Կոմունայի  
անդամ, նրա պատմագիր Արնոն:

«Յերկու շաբաթ կոտորում էին առանց դատի: Փարիզը  
մի վիթխարի սպանդանոց դարձավ: Գնդակահարում էին կա-  
նանց թե մեծերին և թե փոքրերին, յերեխատեք մայրերին,  
անմայր յերեխաներին, անյերեխա մայրերին, և, վոր ամենա-  
սարսափելին է, գնդակահարում էին անդեն ծերունիներին,  
հիվանդներին ու մեռնողներին: Հիվանդանոցներում անդամա-  
հատվածներին սվիններին առած՝ շան լակոտների պես դուրս  
էին չարտում արյան վտակների մեջ»:

Կոմունայի բազմաթիվ մասնակիցներ բարեկազմների վրա  
բնկան, քայց ավելի շատ՝ Վերսալի դահիճների ձեռքով Կո-  
մունան պարտվելուց հետո: Կոմունայի շարքային մասնակից-  
ները, բանվորները, նրանց կանայք՝ նույնիսկ յերեխաները  
մահից առաջ հերոսական հանգստությամբ էին պահում իրենց:  
Վերսալի դահիճներն առանձնապես ծաղր ու ծանախի յենթար-  
կեցին գերի վերցրած Կոմունայի առաջնորդ Վարլենին: Յեր-  
կար ժամանակ նրան ման էին տալիս փողոցում ու ծեծում,  
մինչև վոր, վերջապես, գնդակահարությունը նրան ազատեց  
այդ տանջանքից:

Ջինվորները տասնյակ հազարավոր բանտարկվածներ ու  
գերիներ էին քշում դեպի Վերսալ՝ ճանապարհին ծեծելով ու  
Վերսալում դաժան կտտանքների յենթարկվելով: Այնտեղ այդ  
դժբախտներին ծաղր ու ծանախում եր բուրժուական ու արիս-  
տոկրատական հասարակութունը: Կապկապած գերիներին ծե-  
ծում, ցեխով էին խփում: Բուրժուազիան կոմունարների ա-  
րյունով եր արբում: Թերթերը գաղանություններ էին հրա-  
հրում, պահանջում էին ներանոր մահապատիժներ: Բուրժուա-  
ճնողներն իրենց յերեխաներին տանում էին կոմունարների  
գիակներին նայելու, վորպես հետաքրքիր ու խրատական տե-  
սարանի:

Կոմունայի բոլոր դահիճներից առանձնապես արյունարբու



դանվեց զենեքալ Գալսֆեն: Մի անգամ, յերբ նրա մոտ մի քանի հարյուր զերի յեն տանում, նա հրամայում է. — Շարքերից թող դուրս դան նրա՛նք, ում մաղերն սպիտակ են:

Այս նշանակում էր, վոր դահիճն իր առաջին զոհերը նշանակել է 1848 թ. հեղափոխության մասնակիցներին:

Նրանցից 111 հոգի դանվեց, և բոլորն էլ զնդակահարվեցին: Գնդակահարում էյին առաջին պատահած զերիներին մի միայն այն պատճառով, վոր նրանց ձեռքերը մաղուրտ էյին: Առանց դատի բազմաթիվ զնդակահարություններից հետո սկսվեցին զինվորական դատարանների դատավարությունները, վոր ամբողջ յերկու տարի տևեց:

Դատի յենթարկված 36 հազար հոգուց վերապի աքյունոտ դատարանները կարողացան դատապարտել միայն 14 հազար հոգուց վոչ ավելի մարդկանց, վորովհետև մյուսների դեմ, վոր յենթարկվել էյին բանտի բոլոր տեսակի սարսափներին ու թշնամիների բոլոր ծաղր ու ծանակին, վոչ մի տվյալ չգտնվեց: 270 մարդ մահվան դատապարտվեց, 410-ը՝ տաժանակիր աշխատանքի, մոտ 9 հազար՝ բանտարկության ու աքսորի, իսկ մնացածը՝ ավելի թեթև պատիժների:

Վերապի դահիճների զոհերի ընդհանուր թիվը մոտավոր թվերով այս է. — 30 հազար հոգի «արյան չաբաթի» ժամանակ սպանված, 3500 հոգի վերքերից ու հիվանդություններից մեռած, մոտ 14 հազար հոգի տաժանյրկիր աշխատանքի, բանտի ու աքսորի դատապարտված և, վերջապես, 70 հազար կին, յերեխա և ծեր, վորոնք զրկվել էյին միակ կերակրողից ու մնացել էյին առանց սպրուտտի միջոցների:

Կոմունայի մասնակիցներից չառերին հաջողվեց արտասահման փախչել, վորտեղ նրանք յերկար տարիներ հալածվում էյին:

Փարիզի Կոմունան վոչնչացվեց: — Այժմ սոցիալիզմի բանը յերկար ժամանակով վերջացած է, — գոչում էր արյունարբու Տյերը: Ֆրանսիական բուրժուազիան պրոլետարիատից դաժան կերպով վրեժ լուծեց այն սարսափի համար վոր պրոլետարիատը նրան ներշնչել էր իր տիրապետության մի քանի չաբաթ:

Վա ընթացքում: Յնծում էր նաև վողջ համաշխարհային բուրժուազիան:

Փարիզի Կոմունայի հերոսությունն որինակ դարձավ հետագա սերունդների հեղափոխական բանվորների համար: Հիշողությունն այն մասին, թե բուրժուազիան ինչպես էր դատաստան տեսնում Կոմունարների նկատմամբ, չառ տասնյակ տարիներ ընթացքում բանվորների սիրտը կրակոտ ատելությամբ է վառում դեպի ճնշողները: Յեվ մարգարեյորեն իրավացի յեր Մարքսը, յերբ Կոմունայի կործանման վերաբերյալ իր բոցավառ մանիֆեստը հետևյալ բառերով էր վերջացնում:

«Բանվորների Փարիզը, Կոմունայի Փարիզը միշտ պատվով կապրի վորպես նոր հասարակության պանծալի նախակարգետ: Նրա նահատակներն իրենց արձան են կանգնացրել բանվոր դատակարգի մեծ սրտի մեջ, իսկ նրա դահիճներին պատմությունը դամել է այն անարգանքի սյունին, վորից վոչ վոք չի կարող նրանց պոկել»:

#### 4. ՓԱՐԻԶԻ ԿՈՄՈՒՆԱՆ, ՊՐՈՒԵՏԱՐԻԱՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅԲԱՐՆ ՈՒ ՄՈՊՐԻ ԱՆԵԼԻԲՆԵՐԸ

Փարիզի Կոմունան, վոր պրոլետարիատի կողմից իշխանությունը զբաղեւում է իր զիկտատուրան հաստատելու առաջին փորձն էր պատմության մեջ, ցույց տվեց, թե բուրժուազիան ի՛նչ դադանությունների յե ընդունակ հեղափոխական պրոլետարիատի դեմ մղած իր պայքարում:

Փարիզի Կոմունայի շրջանում I ինտերնացիոնալի միացրած բանվոր դատակարգի զիկտակից ավանդարդը համեմատաբար չառ ստկավաթիվ էր:

Կոմունայի պրոլետարիատը մեկուսացված էր թե միջազգային պրոլետարիատից և թե ամբողջ Ֆրանսիայից:

Այդ որից միջազգային պրոլետարիատը հեղափոխական պայքարների մեջ ամրացել ու անհամեմատ աճել է: Յեվ Կոմունայի դասերն անտեղի չկորան:

1905 թ. մեր յերկրի բանվոր դատակարգն ու իր կուսակցությունն իրենց հետևից արդեն միլիոնավոր աշխատավորներ էյին



տանում: Այդ հեղափոխութեանը հաջորդեց ամբողջ Յեզ-  
րոպայի բանվոր դասակարգի շարժման հսկայական մի վերելք,  
դեպի քաղաքական կյանք սկսեցին արթնանալ նաև Արևելքի  
ժողովուրդները: Պարսկաստանի հեղափոխութեանը՝ 1906  
թվին, Տաճկաստանինը՝ 1908 թվին, վերջապես չինական հե-  
ղափոխության սկիզբը՝ 1911-1912 թ. թ. ծավալ առնող և ըն-  
դարձակվող միջազգային հեղափոխական շարժման փուլեր  
էին:

Յարակից կառավարութիւնները շարունակում էր Փարիզի  
կոմունայի դահլիճները գործը: Բայց նա չսպանեց պրոլետա-  
րիատի, գյուղացիութեան և նախկին ռուսական կայսրութեան  
ճնշված ժողովուրդների հեղափոխական շարժումը: 1905 թ.  
հեղափոխութեանը կոսից պրոլետարիատի հեղափոխական ա-  
վանգարդին ու նրան հսկայական փորձ տվեց:

Հոկտեմբերյան հեղափոխութեան ամբողջ աշխարհում պրո-  
լետարական հեղափոխութեան նոր դարաշրջան բացեց: Կոմունիս-  
տական ինտերնացիոնալը յերկրագնդի բոլոր անկյուններում մի-  
ջինավոր ու միխոնավոր բանվորներին ու գաղութային ճնշված  
ժողովուրդներին պայքար և ղեկավարում: Պրոլետարիատի հեղա-  
փոխական մեծ պայքարներ են հասունանում ընդդէմ իմպերիա-  
լիստական դիկտատիւնների:

Գրոհի դադարաբեր հասունանում է ամբողջ աշխարհի բանվոր  
դասակարգի զիտակցութեան մեջ:

Բուրժուազիայի խոճապային սարսափը՝ տնող հեղափոխա-  
կան շարժումից՝ նրան մղում է դեպի բուրժուական դեմոկրա-  
տիայի ու պարլամենտարիզմի բոլոր ձևերի վերացում, անցումը  
դեպի կապիտալի բացարձակ ու լիտի դիկտատուրա՝ դեպի ֆա-  
շիզմ, դեպի կատաղի տեռոր՝ ընդդէմ բանվոր դասակարգի, և  
այս բանում է ամենից առաջ յերևան գալիս բուրժուազիայի  
տնդրութիւնը: Նա այլևս չի կարող հին՝ փորձված մեթոդների  
օգնութեամբ ճնշել աշխատավոր մասսաներին:

Այն, ինչ Ֆրանսիական բուրժուազիան արեց իշխանութիւնն  
իրենց ձեռքը վերցրած Փարիզի բանվորներին վոչնչացնելու հա-  
մար, ինչ ցարական կառավարութիւնն արեց հեղափոխական

բանվորների ու գյուղացիների նկատմամբ 1905 թ. մեր յերկ-  
րում հեղափոխութեանը պարավելուց հետո, նույնն էլ կրկնեց  
հետագայում, հետապատեւագմյան շրջանում, նաև Բավարիա-  
յի ու Հունգարիայի բուրժուազիան՝ 1919 թ. այդ յերկրներում  
խորհրդային հանրապետութիւնների ջախջախելուց հետո,  
նույնը արեց Չինաստանի բուրժուազիան 1927 թվին, յերբ մի-  
ջազգային իմպերիալիզմի դաշնակցութեամբ կործանեց Կոմունի-  
կոմունան: Նույնն էլ հիմա պրոլետարական հեղափոխութեան վե-  
րահաս սարսափից դերմանական ֆաշիզմն է անում: Նույնն է  
անում բոլոր յերկրների բուրժուազիան, ուր պրոլետարիատը  
պայքարի յե դուրս գալիս իշխանութեան համար:

Բայց սպիտակ տեռորը չի կարողանում կասեցնել կոմունիս-  
տական կուսակցութիւնների, Կոմունիստական ինտերնացիոնալի  
ղեկավարա՞ծ՝ պրոլետարական մասսաների հեղափոխական շար-  
ժումն ամբողջ աշխարհում: Այս բանն են ապացուցում վողջ ան-  
ցալ տարւա հեղափոխական դեպքերը: Յերբ 1934 թ. փետրե-  
րին վերստացիւնների հետնորդները՝ «Թազալորի քաջերն» ու  
ֆաշիստական մյուս կազմակերպութիւնները փողոց դուրս յե-  
կան ցույցի, Փարիզի ու Ֆրանսիայի արդյունաբերական մյուս  
կենտրոններից շատերի բանվորները ցույց տվին, վոր իրենց մեջ  
կենդանի յե իրենց պանծալի նախորդների՝ Փարիզի կոմունար-  
ների հիշատակը:

Բանվորական ցույցերը, վոր Փարիզը վաղուց չէր տեսել, հեղե-  
գեցին Փարիզի փողոցներն ու հրապարակները: Վոստիկանու-  
թեան ձեռքով սպանված բանվորների թաղման ժամանակ դեպի  
Պեր-Լաշեզ դերեզմանատունը տանող ամբողջ ճանապարհով յեր-  
կարող պրոլետարական հուժկու և բաղմահազար ցույցի ժամա-  
նակ բացականչութիւններ էլին լսվում՝ «Մեռելների վրեժը  
կըլծվի»: Կեցցե՛ Կոմունան: Կեցցե՛ կոմկուսակցութիւնը: Ամե-  
նուրե՛ք խորհուրդները»:

Այս բանից անմիջապէս հետո տարտամբեցին Վիեննայի ու  
Ավստրիայի մյուս բանվորական կենտրոնների պրոլետարներն ու  
վեց որ հերոսական պայքար մղեցին Դոլֆուսի ֆաշիստական  
կառավարութեան դէմ: Հարյուրավոր սպանվածներ ու վիրա-



վորներ, տասնյակ քարուքանդ արված տներ՝ միմիայն Վիեննայում:

Ալստրիական Փաշիզմը ճնշելով ալստրիական պրոլետարիատի հերոսական արստամբուլթյունը՝ իր մոլեռանդ դաժանությամբ գերազանցեց նույնիսկ Փարիզի կոմունայի մոռյլ «հերոսներին»՝ Տյերին ու Գալիֆեյին: Մասնայական գնդակահարություններ, վայրագ ծեծ, կտտանք և ծաղր ու ծանակ բանտերում, կախաղանների անտառ, ահա թե ինչով պատառնանեց ալստրիական Փաշիզմը պրոլետարիատի ապստամբությանը:

ԱՄՆ-ի դործադուլային վիթխարի շարժումը, վոր դուգակցվում էր բանվորների և վոստիկանության ու բուրժուական գվարդիայի միջև տեղի ունեցող արյունահեղ ընդհարումներով, վորերիկ Հոլանդիայի բարիկադային կռիվները, — այս բոլորը ավարտվեցին Սպանիայի անցյալ թվի հոկտեմբերի վիթխարի պրոլետարական ապստամբությամբ: Կռիվներ եյին տեղի ունենում ամբողջ Սպանիայում: Առտուրիայի բանվորներն իշխանությունը դրավեցին, Կոմունա հայտարարեցին ու խորհուրդներ հիմնեցին:

Սպանիայի Փաշիստական կառավարությունն Սպանիայի կոմունարներին դեմ մի ամբողջ բանակ շարժեց ու ամեն տեսակ գնեք, և դադանարար, վորի դեմ աղոտանում են Փարիզի կոմունայի ստրատիները, դատաստան տեսավ ապստամբներին՝ առանց խնայելու թե կանանց և թե յերեխաներին:

Այս անգամ ել բուրժուա-Փաշիստական կառավարությանը հաջողվեց ընկճել բանվորական ապստամբությունը: Բայց հոկտեմբերյան կռիվներն ապացուցեցին, վոր Սպանիայի աշխատավորության հակայական մասն արդեն գիտակցում է իր դատակարգային նպատակը — իշխանություն դրավելը — և կարողանում է հերոսաբար պայքարել հանուն այդ իշխանության, վոր չկա այնպիսի մի ուժ, վորը կարողանար ընկճել պրոլետարիատի պարբարի հեղափոխական կամքը: Սպանիայի հոկտեմբերյան ապստամբությունը ընկճված է, բայց Սպանիայի հեղափոխությունը վոջնացված չի: Այն շարունակվում է: Ձի դադարում չին բանվորների ու գյուղացիների հեղափոխական պայքարը՝ բնդդեմ սեփական կառավարության և արքայազմայան գիշատիչներին:

1927 թվին չինական հեղափոխության և հեղափոխության դեմ միացած արքայազմայան իմպերիալիստներին համատեղ ջանքերով, հերոսական կռիվներից հետո ճգմվեց Կանտոնի Կոմունան: Այդ կոմունան ընդամենը յերեք որ դիմացավ: Բայց չնայած դրան, այն մի դրոշ դարձավ Չինաստանում դարգացող նոր հեղափոխության, խորհրդային Չինաստանի համար:

Չինաստանի խորհրդային շրջաններն անընկճել են, և չինական կարմիր բանակը վոջ միայն դիմացավ չին բանվորներին դահիճ Չան-Կայ-Շիի դիկավորությամբ կաղմակերպված բոլոր արշավանքներին, այլև հաղթականորեն առաջ է շարժվում:

Փարիզի Կոմունան ստիպված էր պայքարել վոջ միայն Վերսալի կառավարության դեմ, այլև դավաճանների ու լրտեսների, ինչպես և բոլոր նրանց դեմ, ով իր վոքրոգությամբ ու համաձայնողականությամբ քայքայում էր մոցնում կոմունարներին շարքերը: Նույն բանն այժմ ստիպված է անել բոլոր կապիտալիստական յերկրների հեղափոխական պրոլետարիատը: Վորովհետև բանվոր դատակարգի դեմ բուրժուակիայի մղած պայքարում II Ինտերնացիոնալի կուսակցության սոցիալ-Փաշիստները դավաճանի դեր են խաղում: Գերմանական սոցիալ-Փաշիստների դավաճանական վարքը Փաշիստներին ոգնեց իշխանության դուրս կանգնել և հեղափոխական բանվորների նկատմամբ իրենց անորինակ դատաստանը տեսնել:

Ալստրիական սոցիալ-դեմոկրատիայի դավաճանությունը Փաշիստներին ոգնեց Ալստրիայի պրոլետարիատի ապստամբությունը ճնշելու և հեղադրական աղտ հանդիսանալու վողջ II Ինտերնացիոնալի դեմ: Իրենց դավաճանորեն պահեցին Սպանիայի անարիստ-սինդիկալիստները:

Հեղափոխական պրոլետարիատի դեմ մղած իր պայքարում համաշխարհային Փաշիզմը պատերազմ է պատրաստում սոցիալիստական միակ պետության՝ ԽՍՀՄ-ի դեմ: Համաշխարհային Փաշիզմը պատրաստ է մեր յերկրի ներսում ոգնություն ցույց տալ ջախջախված, բայց չվոջնացված դատակարգային թշնամուն, վոր մահվան վերջին ջղաճգությունների ժամանակ ձեռքը դցում է պայքարի ամենազաղիր միջոցներին: Դատակարգային



Թշնամիները ուղարկած չարազործի ձեռքով անցյալ տարի դեկտեմբերին սպանվեց Լենինգրադի պրոլետարների սիրելի առաջնորդ ընկ. Կիրովը։ Ամբողջ աշխարհի հեղափոխական պրոլետարիատը վողջունեց Խորհրդային կառավարության վճռական միջոցները՝ տեղորոշելու ու նրա մեխանիզմների դեմ։ Յեւ մինչդեռ Փարիզի Կոմունայի վետերաններից մեկը՝ ՏՏ տարեկան Գուստավ Ինարը, պատվո պահակ էր կանգնած ընկ. Կիրովի դադադի մոտ, բուրժուական գործակալները, Ֆրանսիայի ռեֆորմիստական արհմիությունների առաջնորդները, վոր ֆաշիստական զազանությունների մատին լուռ էյին, զաղիր մի բողոքով դուրս յեկան՝ մեր յերկրում և Խորհրդային այս մեծ կոմունայում՝ տեղորոշողներին զնգակահարելու դեմ։

Մարտի 18-ը—Փարիզի կոմունայի որն է։ Վոչ միայն կոմունայի զոհերի հիշատակի որն է այդ, այլև պայքարի որ է, վորը նվիրված է այն մարդկանց, ով այսօր համայն աշխարհում շարունակում է Փարիզի կոմունայի գործը։ Կոմունայի դահիճները հանձինս ֆաշիստների, իրենց արժանավոր ժառանգները դռան։ Գերի վերցրած բանվոր մարտիկների նկատմամբ գործ դրած իրենց զազանություններով, իրենց միջնադարյան կտտանքներով ու ծանակով ֆաշիստները գերազանցում են թե վերսալի կառավարությունը և թե Նիկոլայ 2-րդի կառավարությունը։ Բայց Փարիզի կոմունայի հերոսների պես, 1905 թ. բարիկադային կռիվների, հոկտեմբերյան հեղափոխության ու քաղաքացիական կռիվների հերոսների պես, արդի պրոլետարիատն էլ ֆաշիստական յերկրներում իր հերոսներն է առաջ քաշում։

Ավստրիական ու սլավոնական պրոլետարիատի հերոսությունը Փարիզի կոմունայի ամենավառ մեծագործությունն է հիշեցնում։ Լայպցիգի դատավարության ժամանակ բուլղարական կոմունիստ Դիմիտրովի ցուցաբերած հերոսական վարքը, անհողողդ տոկունություն ցուցաբերող մարտիկի որինակը տվեց, վորը պատրաստ էր իր վողջ ուժերը, ամբողջ կյանքը նվիրել հեղափոխության գործին։ Այս բանը համաշխարհային բարոյական մի հաղթանակ է՝ ընդդեմ ֆաշիստական դիկտատուրայի և ընդդեմ սոցիալ-ֆաշիզմի յերկհոտ դավաճանություն։

«Փարիզի Թնդանությունների վորոտը, — դրում էր Լենինը 1911 թ.

զարթեցրեց խոր քուն մտած պրոլետարիատի ամենահետամնաց խավերը և զարկ տվեց հեղափոխական-սոցիալիստական պրոպագանդի ուժեղացմանը։ Ահա, թե ինչու Կոմունայի գործը մեռած չէ, այդ գործը մինչև որս ապրում է մեղանից յուրաքանչյուրի մեջ։ Կոմունայի գործը սոցիալական հեղափոխության գործն է, աշխատավորների տնտեսական ու քաղաքական կատարյալ ազատագրման գործն է, համաշխարհային պրոլետարիատի գործն է։ Ահա այս իմաստով էլ Կոմունայի գործը անմահ է»։

Ինչքան հեղափոխական պայքարներում աճում ու ամրապնդվում էր բանվոր դասակարգը, այնչափ էլ աճում ու ամրապնդվում էր աշխատավորության միջազգային հեղափոխական համերաշխությունը։

ԿԱՐԼ ՄԱՐԽՍԸ—վոր Փարիզի կոմունայի որերին աքսորանքում էր ապրում՝ Լոնդոնում, պրոլետարական ու դեմոկրատական Յեւրոպայի հասարակական կարծիքը կաղմակերպվեց ի պաշտպանություն Կոմունայի։ Կոմունայի պարտությունից հետո նա Կոմունայի զոհերի ոգնություն հակայական մի կամպանիա կաղմակերպեց։ Նա մերկացնում էր վերսալի դահիճների զազանային դաժանությունները, պայքարում էր փախած կոմունարներին ֆրանսիական կառավարության ձեռքը տալու դեմ, հերքում էր հերոսների դեմ հարուցած զաղիր ամբաստանությունները և նյութական ոժանդակություն էր կաղմակերպում փախած կոմունարներին)։

Միջազգային համերաշխության դադավարը սերտ կերպով կապված է Փարիզի կոմունայի որվա հետ։ Փարիզի կոմունան ամենաառաջինն էր այն հեղափոխական անցքերից, վոր բոլոր յերկրների աշխատավորության մեջ համերաշխության գլացմունք առաջացրեց, սպիտակ տեղորի զոհերին ոգնություն հասնելու անհրաժեշտությունը գիտակցությունը դարբնեց։ Այս պատճառով էլ Փարիզի կոմունայի որը ՄՈՊՐ-ն իր որն է համարում։

Փարիզի կոմունայի որն ամբողջ աշխարհի աշխատավորության բողոքի որն է՝ ընդդեմ բուրժուազիայի սպիտակ տեղորի, միջազգային համերաշխության որը, հեղափոխության մարտիկներին կաղմակերպված ձևով ոգնություն ցույց տալու որը։

Անթիվ ու անհամար զոհեր է տվել պրոլետարիատն իր հեղա-



փոխական պայքարում՝ տևած 1871 թ. մեծ որերից, յերբ Փարիզի կոմունան արյան մեջ խեղդվեց: Անթիլ ու անհամար են և այժմ՝ հեղափոխական պրոլետարիատի զոհերը՝ իր հերոսական պայքարում:

1934 թվի ինն ամսվա ընթացքում<sup>1)</sup> սպանվել ու տանջանքների յին մատնվել 260 հազար բանվոր, գյուղացի ու դաղուժային ստրուկներ, վիրավորվել են մոտ 96 հազար, ծեծվել ու թեթև վիրավորվել են 500 հազարից ավելի, բանտարկվել են մոտ 400 հազար: Հոկտեմբեր ամսում, միայն Իսպանիայում սպանվել են մոտ 6 հազար բանվորներ, վորից 4 հազարից ավելին՝ Աստուրիայում, վիրավորվել են մոտ 10 հազար և 70 հազար տառապում են սպանական բուրժուազիայի բանտերում ու գնդաններում:

Փարիզի կոմունայի որը մեզ մեր պարաքը պետք է հիշեցնի, Փաշխտական դիկտատուրայի ճիրաններում գտնվող մեր յեղբայրների նկատմամբ, համաշխարհային խմբերիալիզմի դաղուժների ու կիսադաղուժների կեղեքվող աշխատավորութայն նկատմամբ: Վողջ աշխատավորութայն համերաշխութայն միացյալ ճակատ՝ ընդդեմ Փաշիզմի, պայքար հանուն գերմանական պրոլետարիատի առաջնորդ ընկ. Թեյլֆօրսի աղատութայն, հանուն հունգարացի կոմունիստ ընկ. Ռակոշի աղատութայն, հանուն Սմերիկայի Միոստրոյի անձեզ նեղր պատանիների ու կապիտալի մյուս բանտարկյալների աղատութայն—ահալասիկ ՄՈՊՐ-ի այս որվա լողունդները:

Շարունակ բողմապալիզող՝ բոլոր յերկրների Փաշխտական զոհերին ոգնություն ցույց տալու համար վողջ ուժերի միացման խեղիքը, ՄՈՊՐ-ի գործկոմի նամակով և առաջարկվել յերկրորդ և Ամստերդամի ինտերնացիոնալներին<sup>2)</sup>: Այդ նամակով ՄՈՊՐ-ն առաջարկում էր միացյալ ճակատ ստեղծել՝ աղատադրական հեղափոխական շարժման զոհերին ոգնություն կազմակերպելու համար, անկախ այն բանից, թե ինչ կուսակցութայն են պատկանում այդ զոհերը: ՄՈՊՐ-ի Գործկոմի դիմումին՝ յերկրորդ

1) Ներառյալ նաև 2ինաստանդ ուր շարունակվում է խորհրդային չըջանների հարձիք բանակի քաղաքացիական անընդհատ կռիվը բուրժուա-կալվածատիրական կառավարութայն դեմ:

2) Նամակն ուղղված է 1935 թվին:

և Ամստերդամի ինտերնացիոնալները չարձադանքեցին: Նրանք մերժեցին Գործկոմի առաջարկը, հրաժարվեցին Փաշխտական տեռորի զոհերին ոգնություն ցույց տալուց:

ՄՈՊՐ-ի անելիքները չեն սահմանափակվում Փաշիզմի դեմ պայքարող աշխատավորութայնը նյութական ու բարոյական ոգնություն ցույց տալու գործով:

Սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում, միայն մեր հաղթանակը չի: Համաշխարհային պրոլետարիատը իՍՂՄ-ի վրա նայում է, վորպես իր առաջավոր ջոկատը հեղափոխական մարտերում: Մեր յուրաքանչյուր հաղթանակը նաև կապիտալիստական յերկրների աշխատավորութայն հաղթանակն է՝ ընդդեմ կապիտալի մղած իրենց պայքարում:

Վերսալցիների կողմից Փարիզի կոմունան ջախջախվելու որից, Փարիզի կոմունան, վոր 72 որ իշխանությունն իր ձեռքում պահեց, մինչև իՍՂՄ խորհուրդների 7-րդ համագումարը, վոր ամփոփեց անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցող պրոլետարիատի դիկտատուրայի անցած 17 տարվա սոցիալիստական շինարարութայն արդյունքները—ահալասիկ սոցիալիզմի 64 տարվա հաղթանակն ուղին:

Սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում, կուլակութայն ջախջախումը, նրա վերացումը, վորպես դասակարգ, կոլտնտեսական շինարարութայն վերջնական հաղթանակը, նոր՝ սոցիալիստական հզոր ինդուստրիայի կառուցումը—այս բոլորը մեր կուսակցութայն կհին թույլ տվին առաջարկել խորհուրդների 7-րդ համագումարին՝ վորոշ փոփոխություններ մտցնել իՍՂՄ սահմանադրութայն մեջ: Այս փոփոխությունները պետք է կատարվեն ընտրական սխտեմի հետագա դեմոկրատացման ուղղությամբ՝ վոչ բոլորովին հավասար ընտրությունները՝ հավասար, բողմաստիճանը՝ ուղղակի, բաց ընտրությունները փակ ընտրություններով փոխելու իմաստով:

Այսպիսի փոփոխություններ պահանջեցին, մեր յերկրի եկոնոմիկայի և դասակարգային ուժերի փոխհարաբերակցութայն մեջ կատարվող հսկայական տեղաշարժերը:



Խորհուրդների 7-րդ համագումարը միահամուռ կերպով ընդունեց մեր կուսակցութեան կենտրոնի առաջարկը և վորոշեց առաջիկա ընտրութիւնները նոր սխեմայի հիմունքներով կատարել:

Կապիտալիստական յերկրներում վերացվում են նույնիսկ բուրժուական դեմոկրատիայի կեղծ ձեւերը, վոր աշխատավորութեան դիտակցութիւնը դեմոկրատական ազատութեան յերազներով մթաղնելու նպատակին են ծառայում:

Բուրժուական պետութեան մեջ ինչպիսի փոփոխութիւններ ելվոր լինեն, նրանք մի բանի յեն ուղղված—աշխատավորութեանը ել ամելի հեռացնել պետական իշխանութիւնից, պետական ապարատի միջոցով ել ամելի ամուր պահել իշխանութիւնը մոնոպոլիստական կապիտալի ձեռքին: ԽՍՀՄ-ում Խորհուրդերի 7-րդ համագումարն իսկական Խորհրդային դեմոկրատիայի նոր դարաշրջան ե բաց արել ամբողջ աշխատավորութեան համար:

Խորհրդային սահմանադրութիւնը փոփոխութեան յենթարկող վորոշումն արտացոլում ե մեր յերկրի սոցիալիզմի հսկայական զարգացումը: Սոցիալիզմի աճման այս նոր ապացույցը միջազգային պրոլետարիատի մեջ պետք ե առաջ բերի եներգիայի նոր հորդում ու համատ՝ դեպի կոմունիզմի դործը:

Մեր յերկրի բանվոր դասակարգը կապիտալի դեմ մղած իր պայքարում Փարիզի կոմունայի սխալները չկրկնեց, բայց Փարիզի կոմունայի դասերը հաշվի առնվեցին: Դրա համար ել կապիտալիստների միացյալ ուժերի դեմ կատաղի կռիւում, հաղթողը սոցիալիզմի յերկիրն յեղալ: Տնտեսական ճգնաժամի փակուղուց դուրս գալու յեղք փնտռելով, կապիտալիստական յերկրները նորից են փորձում այդ յեղքն ի հաշիվ ԽՍՀՄ-ի գտնել: Հիմա արդեն ազատ, առանց քաշվելու, խոսում են և գրում այս առթիվ:

Փարիզի կոմունայի որը, միջազգային հեղափոխական համերաշխութեան որը, ՄՈՊՐ-ը բոլոր յերկրներում կոչ ե անում աշխատավորութեանը՝ ամուր սեղմել համերաշխութեան միջազգային միասնական ճակատի շարքերը՝ պատերազմի վտանգի դեմ պայքարելու համար:

Մեր յերկրի աշխատավորութիւնը, վոր սոցիալիզմ կառուցելու գործում դասակարգային պայքարի ամենահամարձակ խնդիրներն ե իրադործել, խնդիրներ, վորոնց նպատակ եյին դրել Փարիզի կոմունայի պանծալի հերոսները, ՄՈՊՐ-ը կոչ ե անում՝ հարվածային լինել սոցիալիստական շինարարութեան բոլոր բնադախտներում, այսպիսով ամբապնդել ԽՍՀՄ՝ ամբողջ աշխարհի աշխատավորութեան հարվածային բրիգադի հզորութիւնը և մինչե վերջ հապատարիմ մնալ բոլոր յերկրների պրոլետարների յեղբայրական միութեան դործին:





ՀՀ Ազգային գրադարան



NL0409810



